

HAKKUNSI

کتابخانه
قصاصت
غزلیات
قطعات
رباعیات

کتابخانه

وابیا پرانده



8(55)
A-83
h2

1524

ՀԱՄԻԴԵՆԵՐ.
ՆԱԶԱԿՆԵՐ.
ԻՌՏԱԿԱՆ-ՓԻԼՍՈՓԱ
ՅԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՈՒՒ

ՈՒՊԱՔԻ

ԹՅՈՒՆՆԵՐ.
ԲԵՅԹԵՐ. ՈՒՌ ԲԱՅԱԹ:



Աշխատանքը կատարված է
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
արևելագիտության ինստիտուտում

Պատասխանատու խմբագիր՝
ՊԱՐՈՒՅՐ ՍՈՒՐԱՂՅԱՆ

Ժողովածուն ներկայացնում է պարսկական
միջնադարյան-դասական բանաստեղծության
հիմնադրի՝ Ռուդաքիի պոեզիայի ընտրանին:

© Սշակույթի հայկական ֆոնդ
«Ապոլոն» հրատարակչություն, 1995
Թարգմանության և ձևավորման համար



ԹԱՐԳ-ՄԱՆԵՑ
ՎԱՏԱԳՆ ԴԱԿԹՅԱՆԸ

ՊԱՐՍԿԵՐԵՆԵՐՑ ՏՈՂԱՑԻ ԹԱՐԳ-ՄԱՆԵՑ,
ԿԱԶՄԵՑ, ՍՈՒՂԱԶԱՐԱՆԸ ԳՐԵՑ
ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐԵՑ
ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՂՄՈՅԱՆԸ

ՆԿԱՐԻՉ
ՀԵՆՐԻԿ ՄԱՍՅԱՆ

ՀԱՆՃԱՐԵՂ ՊԱՐԶՈՒԹՅԱՆ ՎԱՐՊԵՏԸ

Որ խելացին արդարության անսպ կյանքում,
Որ դու տեսնես ճանապարհիդ, ով խելացի...
ՌՈՒՂԱՔԻ

Հայտնի չէ, թե ինչպիսին կլիներ քաղաքակրթության հետագա առաջընթացը, եթե յոթերորդ դարում Մոհամեդի դրոշի ներքո չսփավորվեին այն բազմաթիվ ցեղերը, որոնք ապրում էին Արաբիայի ընդարձակ տարածքներում «անկախ և ինքնազուլխ»: «Արաբական խալիֆայթ» կոչվող նոր ձևավորված պետության տարածքները ձգվում էին Հնդկաստանից մինչև Ատլանտյանի ափերը, Միջին Ասիայից մինչև Աֆրիկա: Իրանը, Եգիպտոսը, Սիրիան, Պաղեստինը, Միջինասիական երկրները, Հնդկաստանի հյուսիսային շրջանը, Հայաստանը, Կրաստանի մի մասը, Ատրպատականը մտան Արաբական խալիֆայթի կազմի մեջ: Արաբների հաղթարշավն ավարտվեց Եվրոպայում, երբ 711 թ. արաբ հրամանատար ալ-Թարիզը մտավ Իսպանիա՝ իր անունը թողնելով Տիրալթար (Թարիզի լեռ) նեղուցի վրա:

Խալիֆայթի մայրաքաղաքից հեռու ընկած ծայրամասերը կառավարում էին կենտրոնից նշանակված կուսակալները: Կենտրոնաձիգ պետության գործադրած ամենախիստ և հետևողական ջանքերն անգամ ի վիճակի չէին սանձահարելու հրակայածավալ այդ տարածքներում բնակվող բազմաթիվ ժողովուրդների անկախության ձգտումները: 9-10-րդ դդ. արդեն խարխուլվել էին Արաբական խալիֆայթի հիմքերը, և բազմաթիվ տեղական ավատատիրական տներ անկախություն էին ձեռք

բերել: Իսպանիայում ձևավորվել էր Կորդովայի էմիրությունը, Հայաստանում՝ Բագրատունիների և Արծրունիների, Միջին Ասիայում և Իրանում՝ Սաֆարյանների և Սամանյանների թագավորությունները: Պարսկաստանը, որ 637 թ. Քաղիսի ճակատամարտում Սասանյան վերջին շահի՝ Հազկերտ 3-րդի պարտությամբ ավարտել էր իր պետականության փառավոր ճանապարհը, ապա և կորցրել էր զրադաշտական կրոնը, ընդունել իսլամը, կորցրել էր փառլավական գիրը՝ ընդունել արաբականը, կորցրել էր պետական լեզուն, 9-10-րդ դդ. արդեն վերականգնում էր խոսակցական ֆարսին:

Այսպիսի սոցիալ-պատմական մեծ տեղաշարժերի պայմաններում, ահա, ձևավորվում էր նոր պարսկական պոեզիան*, որը կտրվելով արաբների կողմից ոչընչացված մայր գրականության ավանդույթներից, որոնումների մեջ էր:

Մատենագիր Սոհամադ Աուֆիի** (13-րդ դ.) հաղորդած տվյալներից պարզ է դառնում, որ 10-րդ դարում պարսիկներն արդեն սեփականացրել էին արաբական պոեզիայի ժանրային ձևերը և արուզ կոչվող տաղաչափությունը: Աուֆիի յողովածուում պահպանված տասնյակ պարսիկ հեղինակների (Հանգալի, Մորադի, Գորգանի, Բալխի, Ֆարալավի, Դադիդի ևն) շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Ռուդաբի Սամարղանդին: Լա պարսկական գրականության առաջին բանաստեղծն է, որը ժամանակագիրների հավաստմամբ ստեղծագործությունների դիվան (ժողովածու) է ունեցել: Իհարկե, Ռուդաբին պարսկերեն լեզվով գրող առաջին

* Ֆարսի լեզվով ստեղծված միջնադարյան գրականությունը միաժամանակ թափել ժողովրդի սեփականությունն է, քանի որ հին արիական ցեղերի մի ճյուղը՝ իրանականը, նրա նախնին է: Այն հայտնի է նաև որպես պարսկա-թաթարական գրականություն: 16-րդ դարից սկսած, պատմական իրադարձությունների բերումով, այդ երկու գրականությունները բաժանվում են:

** The lubabu-l-Albab of Muhammad Awfi, London-Leide, 1903, part II, pp. 1-10.

բանաստեղծը չէ, սակայն կատարյալ բանաստեղծության առաջնեկն է, որին բախտ էր վիճակվել սեփական ժողովրդի գրականության ձևավորման պատմական առաջելությունը:

Ո՛վ էր Աբու Արդալլահ Ռուդաբին:

Ասում են՝ որտեղ ավարտվում է ճշմարտությունը, այնտեղ սկիզբ է առնում լեզունը: Երա կենսագրությունից մեզ հասած կցկտուր տեղեկությունները պարուրված են ավանդազրույցներով: Հայտնի է, որ ծնվել է 860 ին, Սամարղանդի մոտ, լեռների լանջին փռված Փանջռուղ (հինգ վտակ) գյուղում, որտեղից և ծագում է նրա գրական կեղծանունը՝ Ռուդաբի: Հավաստում են, թե գյուղն օղակող սարերի փեշերին ծվարած հովիվների սրինգն ու հովիտների սոխակներն են եղել մեծ երգչի առաջին ուսուցիչները: Սամարղանդի մադրասեում ստացել է իր կրթությունը և երբ մի օր բռնել է Սամանյան արքունիքի ճամփան, որտեղ արաբական լուծը թոթափած իրանական պետականությունն էր ձևավորվում, արդեն հայտնի է եղել որպես խոսքի վարպետ, երաժիշտ և երգիչ:

Ռուդաբիի կենսագրական դիմագիծը ճշտելու ամենահավաստի աղբյուրը հենց իր՝ Ռուդաբիի գրական ժառանգությունն է:

Հեռու-հեռու ճամփաներից եկավ հեծյալ մի առևական,
Եկավ քեզ մոտ ծառայելու, եկավ հոժար, խոնարի այնքան...

Սամանյան արքունիքը և ինքնիշխան ավատատերերը ապարանքներին նոր րովանդակություն և փայլ տալու համար հովանավորում էին տաղանդավոր գիտնականների, քաղաքական գործիչների, արվեստագետների: Հատկապես գնահատվում

էին բանաստեղծները, որոնք իրենց «տերերի» վարած քաղաքականության քարոզիչներն ու ջատագովներն էին:

Այն փաստը, որ Սամանյան արքունիքում Ռուդաքին փայլել է իր տաղանդով, հաստատում են նրա ժամանակին առավել մոտ կանգնած հետևորդները: Այսպես, Նեգամի Արուգի Սամարղանդին (12-րդ դ.) իր հայտնի «Չորս գրույցում» գրում է. «Այն երջանկությունը, որ բախտ վիճակվեց Ռուդաքիին Սամանյան տոհմի թագավորության օրոք հանպատրաստից ստեղծագործելու և արագորեն էքսպրոմտներ ասելու հմտության համար... չէր տեսել և ոչ ոք»:

Ռուդաքին արքունիքում գլխավորում էր Սամանյան պալատին հեղինակություն բերող բազմաթիվ տաղանդավոր բանաստեղծների խումբը: Ըիշտ է, հովանավորելով գիտության և արվեստի գործիչներին, արքունիքը իրականացնում էր իր հայրենասիրական նպատակները, սատարում իրանական ոգու վերելքը, այնուհանդերձ՝ իր խիստ կանոնակարգված կենսաձևով թելադրում էր նաև որոշակի կողմնորոշում: Սեփական սոցիալական կարգավիճակը պայմանավորում էր բանաստեղծի կենսափոխությունը, գեղագիտական չափանիշները, գեղարվեստական խոսքի նկատմամբ ունեցած մոտեցումը, նկարագրման մեթոդը են: Նրանք գովերգում էին իրենց մեկենասին և դրա համար հարկավոր էր, Դ. Լիխաչովի խոսքերով ասած, «հանդիսավոր պերճախոսություն»: Արվեստի գործը կորցնում էր իր իրական կոչումը, դառնում քաղաքականության գործիք: Օրինակ, հայտնի է, որ երբ սելջուկյան շահ Սանջարը կոչում էր Խորեզմշահ Ասթիգի դեմ, նրանք արքունական բանաստեղծները՝ Անվարին և Ռաշիդ ադ-դին Վաթվաթը, մենամարտում էին միմյանց դեմ քառյակներով և ներքողում իրենց տերերին:

Այդ է պատճառը, որ միջնադարյան պարսիկ դասականների գրական ժառանգության մեջ մեծ տեղ է զբաղեցնում դասիդե¹- ներքողը:

Այսպիսով, արքունական բանաստեղծը պատասխանատու է դառնում ոչ միայն իր ամեն մի տողի համար, այլ նաև՝ արվեստի ուժով ստեղծած տրամադրության, քանի որ անպատեհ խոսքը կարող էր ողբերգական վախճանի հասցնել:

Արքունական բանաստեղծի կյանքի սովորական ուրվագիծը հետևյալն էր. պատոնական ճանաչում, փառք, անկում: Քչերն են խուսափել այդ օրինաչափությունից: Դժբախտ էր նաև Ռուդաքիի վախճանը: Ստուգապես հայտնի է, որ նա վտարվել է արքունիքից՝ սոցիալական հավասարություն քարոզող Ղարաթյան (իսմայիլական) շարժմանը համակրելու համար. ըստ որոշ աղբյուրների՝ կուրացվել է և մահկանացուն կնքել աղքատության մեջ՝ իր հայրենի գյուղում: Եվ իրոք, մոտ հազար տարի անց, թաջիկ գրող և ազգային գործիչ Սադրիդդին Այնին Սամարղանդի մոտ, Փանջուղ գյուղում, հայտնաբերեց Ռուդաքիի գերեզմանը, իսկ մարդաբան քանդակագործ Մ.Գերասիմովը վերականգնեց նրա դիմանկար քանդակը: Վերջինս հաստատեց այն թեզը, որ Ռուդաքիի աչքերը այրել են:

Կենսագիրներից ոչ ոք չի շրջանցել նրա կյանքի այդ ողբերգական փաստը: Բանաստեղծ նասեր Խոսրովը գրում է.

Բազում խրատ և իմաստություն քարոզեց
Այն կույր, սակայն պայծառառես բանաստեղծը...
(տողացի թարգմ.)

12-րդ դարի բանաստեղծ Սուզանի Սամարղանդին, որը անկախ էր և ոչ մեկին չէր ծառայում, գրում է.

Մեկ հարյուրերորդը (նրա), որ դու տալիս ես չնչին բանաստեղծին,
Նույնիսկ Ռուդաքին չէր ստանում Բալամիից...:

(տողացի թարգմ.)

Վերոհիշյալ անվանը մենք հանդիպում ենք նաև Ռուդաքիի ներքողում, որից
հայտնի է դառնում, որ վեզիր Բալամին եղել է Ռուդաքիի հովանավորը:

Մոհամադ Աուֆին Ռուդաքիին ի ծնե կուրություն է վերագրում, սակայն Ռու-
դաքիի պոեզիան այնքան զուներ է, երևակայությունն այնքան վառ, պատկերներն
այնքան տեսողական, որ ֆրանսիացի արևելագետ Ջոն Դարմստետը կատակել է,
թե «Ռուդաքին հաճախ մոռանում է իր կուրության մասին»: Ահավասիկ մի հատված
գարնան նկարագրից.

Երկինքն իսկույն ոտքի հանեց ամպե գնդերն իր անհամար
Եվ գորապետ դարձավ քամին, իսկ որոտը՝ շեփորահար:

Ջահակիրը կայծակն է շեկ՝ ցուլանքներով իր փառահեղ...
Բյուր մարտեր եմ տեսել կյանքում, բայց այս մեկը շատ է ահեղ:

Նայիր ահա այն սն ամպին, կին է ասես որք ու այրի,
Ականջ արա այն որոտին, ողբ է, սուգ է սիրահարի,

Տես, արեգակն իր դեմքն է լույս մերթ-մերթ հանում ամպի տակից,
Ջորական է ասես գերյալ, որ փախչում է իր պահակից...

Հարկ չկա վերլուծել այս հրաշալի պատկերը և խաթարել նրա գեղագիտական
միասնությունը: Պարզ է մի հանգամանք, եթե միջնադարյան բանաստեղծի համար

ընությունը սեփական ընարական զգացումներն ու տրամադրությունն արտահայ-
տող մի դրվագ էր, ապա Ռուդաքիի բնությունը մի ինքնուրույն արժեք է, բնանկարի
դասական նմուշ, որով նա մեկ անգամ ևս մերձենում է վերածննդյան տիտաններին:

Իհարկե, արքունական խիստ գրաքննությունը թելադրում էր թեմաների
կրկնություն, պերճաշուք ոճ, միօրինակ ներքողագրություն, սակայն պարսկական
պոեզիան ավանդականության ուժով կարգավորում էր «հնի» և «նորի» հարաբե-
րակցությունը: Նեգամի Արուզին հաղորդում է, որ ոչ մի բանաստեղծ չէր հասնի
կատարելության, եթե անգիր չիմանար քսան հազար տող իր նախորդների և տաս
հազար՝ իր ժամանակակիցների պոեզիայից...

Այսպիսով, նախորդների լավագույն ավանդույթների հիման վրա վառ անհա-
տականությունները մտահղանում և ստեղծում էին նորը: Այդ էր պատճառը, որ
Ռուդաքիի պոեզիան ժամանակի ընթացքում ձեռք բերեց չափանիշի ուժ, խոսքի
հմտության մեջ նա դարձավ անհասանելիության օրինակ և մեծապես նպաստեց
պարսկական գրականության հետագա զարգացմանը: 11-րդ դարի Ղազնավյան ար-
քունիքի հայտնի ներքողագիր Օնսորին տրտնջում է, թե իր ղազալները՞ «ռուդա-
քիական» չեն:

Հրաշալի են Ռուդաքիի ղազալները,
Իմ ղազալները ռուդաքիական չեն.

Որքան էլ ջանում եմ նրբորեն երևակայել,
Այդ գաղտնիքի վարագույրը բացելն անհնար է:
(տողացի թարգմ.)

Այս արտահայտությունը հետաքրքիր զուգորդությամբ մեզ տանում է դեպի 13-14-րդ դարերի հայ բանաստեղծությունը, երբ Կոստանդին Երզնկացու կրոնակից վանականները, սև սքեմների տակ, եկեղեցու անձուկ պատերի ներսում, հայերեն լեզվով կենսաթրթիռ «շահնամեական» ոտանավոր էին խնդրում նրանից:

Այր մին... ել կայր ու Շահնամայ ասեր ձայնով,
Լա եղբայրք խնդրեցին, թե ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ,
Ես շինեցի գրանքս զայս, ի Շահնամայի ձայն կարդացե՞*:

Հասկանալի է, որ ճաշակի և չափանիշների փոփոխության հանգամանքում դեր է խաղում ոչ միայն անհատի տաղանդը, այլև ժամանակը, պահանջները: Լոր լսարանը նոր խոսք է պահանջում:

Ռուդաբքիի ոճն ու լեզուն հետնորդների կողմից բնորոշվել են որպես սահլէ մոմթանէ՝ «հանճարեղ պարզություն», «անկրկնելի պարզություն», «վեհասքանչ պարզություն»: Դա այն է, որի մասին 12-րդ դարի պոետիկայի գիտակ և տեսարան Ռաշիդ ադ Դին Վաթվաթը գրում է. «Սահլէ մոմթանես» այն է, երբ բանաստեղծությունները թվում են շատ պարզ, սակայն դրանք ստեղծելը շատ բարդ է*:

Ահա մի այդպիսի հանճարեղ պարզության օրինակ.

Հեռու հեռվից Մուլյան³ գետի բույրն է գալիս,
Սիրած յարիս հիշողության հուրն է գալիս,

Ամու գետի ավազների ալիքը տաք
Մետաքսի պես իմ ոտքերին դուր է գալիս,

* Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1962, էջ 209:

Ջեյհունը⁴ հորդ մեր սպիտակ նժույզների
Կեսից վար է, հոխորտալով զուր է գալիս,

Ո՛վ Բուխարա, ուրախ եղիր, ապրիր ուրախ,
Էմիրն ինքը ելել ու քեզ հյուր է գալիս...

Այս բանաստեղծության հիմքում մի հետաքրքիր ավանդազրույց է ընկած: Էմիր Լասրը իր թագավորական շքախմբով Բուխարայից Հերաթ էր գնացել: Բանի որ Հերաթի մի գեղատեսիլ վայրում էր հյուրընկալվում և նրա ժամանակն անցնում էր զվարճությունների ու հանգստի մեջ, Էմիրը մոռացել էր իր գահանիստ Բուխարան և չէր էլ մտածում տուն վերադառնալու մասին: Շքախմբի անդամները հոգնել ու ձանձրացել էին հյուրի դերում լինելուց, կարոտել էին իրենց հարազատներին, սակայն չէին համարձակվում Էմիրին այդ մասին հայտնել: Վերջապես նրանք զգտնում են հնարը: Ռուդաբքիին, որ Լասրի արքունական պոետն էր և շրջագայում էր նրա հետ, համոզում են վերցնել չանգը⁵ և նվագակցելով՝ գովերգել Բուխարան: Ասում են, Ռուդաբքին դեռևս չէր արտասանել իր վերջին բեյթը, երբ Լասրը վեր թռավ և, հեծնելով առաջին պատահած ձին, տնային կոշիկներով սուրաց դեպի Բուխարա: Շվարած շքախմբի անդամները հազիվ հասան նրա հետևից և առաջին իջնանում հագցրեցին ճտքակոշիկները:

Բազմաթիվ հանրահայտ բանաստեղծներ փորձել են նմանակել (նագիրե) այս բանաստեղծությունը, որը պարսկական պոեզիայում պատասխան (ջավաբ) է կոչվում, սակայն մեկ-երկու անհաջող փորձից հուսախաբ՝ հրաժարվել են այդ մտքից: Շատ ավելի ուշ, արքունական պոետների կողմից մշակված նրբաճաշակ ոճի, բանաստեղծական բարդ հնարանքների և ճարտասանական մրցույթների բովում կոփված պոեզիայի գիտակները ըստ արժանվույն չէին գնահատում Ռուդաբքիի

պարզ, Խորասանյան կոչվող ոճը: 15-րդ դարի մատենագիր Դովլաթշահ Սամար-
ղանդին զարմանում է, թե ինչպես են ժամանակին հավանել և սիրել Ռուդաքիի
վերոհիշյալ «պարզ ու անպաճույճ» բանաստեղծությունը: Գուցե չափանիշների
այդ փոփոխությունն է պատճառը, որ նրա դիվանից նվազագույն մաս է պահպանվել:
Օրինակ՝ Ռուդաքիի «Գինու մայրը» դասիդեն անխաթար մեզ է հասել «Սիսրանի
պատմություն» կոչվող գրքից, որտեղ անանուն հեղինակը հաղորդում է, թե այն
գրվել է Էմիր Նասրի պատվերով: Ռուդաքին գրել և մի կուժ գինու հետ այն ուղարկել
է Սիսթան, որտեղ և Էմիր Ջաֆար էրն Սոհամադի⁶ պատվին կազմակերպված
խնջույքում հնչել է առաջին անգամ: Այն սկսվում է գինու պատրաստման տեսա-
րանով (ուսսիթ), որից հետո անցում է կատարվում հիմնական թեմային՝ պատվի-
րատուի գովերգմանը (մադի): Որքան աննկատ է այդ անցումը, այնքան մեծ է գրողի
վարպետությունը:

Գինու մորը զոհասեղան պիտի հանել,
Իսկ զավակին առնանգել ու զնդանել.

Բայց չես կարող առնանգել թե սկզբից՝
Չես տրորել ու ձխելով հոգին քամել...

Ասեներբեյի է Ռուդաքիի ծանոթությունը արաբ հայտնի բանաստեղծ, այդ գրա-
կանության մեջ խրախճանքի՝ որպես ինքնուրույն ժանրի ստեղծող Արու Նավասի
պոեզիային, որը հատկապես ուսումնասիրել և օգտագործել է գինու բոլոր հատ-
կանիշները՝ գույն, երանգ, հոտ, համ, ձև...


Եվ այդպես լուռ, այդպես հլու, հանգստացած,
Լա կշողա, մարջանի ալ գույնն ստացած:

1524

Ալ՝ առավել, քան Եմենի սուտակը ալ,
Առավել քան Բադախշանի⁷ ակները լալ:
Երբ հոտ քաշես, կթվա, թե վարդ է բուրում,
Կթվա, թե մուշկ ու համպար ես համբուրում...

Այստեղ Ռուդաքին ի ցույց է դնում մանրակրկիտ և գունեղ նկարագրության իր
շնորհքը, որը հատուկ ժանր է և վասֆ է կոչվում: Սա դասիդեի դասական նմուշ է,
այդ ձևին հատուկ բոլոր տարրերով՝ բնության, իր վիճակի, սիրուհու գեղեցկության
նկարագրությամբ (վասֆ), ինքնագովերգմամբ (ֆախր), ներբողով (մադի), եղե-
րերգությամբ (մարսիե) են: Այն ամբողջական մի կտավ է, որ մեզ է հասցրել ար-
քայական խրախճանքի ողջ կոլորիտը, Ռուդաքիի միջավայրը, աղբյուրագիտական,
ազգագրական և պատմական հետաքրքրություն ներկայացնող փաստեր՝ հատ-
կապես ինքնակենսագրական տեղեկություններ, որոնք, ի դեպ, բացահայտում են
Ռուդաքիի խոհափիլիսոփայական, երբեմն ընդգծված հոռետեսական հայացքները:
Ծիշտ է, «Գինու մայրը» ներբողը սոցիալական պատվեր է, սակայն այդ հանգա-
մանքը բնավ չի նսեմացնում նրա արժեքը, որովհետև Ռուդաքին, ինչպես ասում
են, տալիս էր «կայսրինը կայսերը, իսկ Աստծունը՝ Աստծուն»: Այն իր ենթատեքս-
տում մի խորհուրդ ունի. պատվիրատուի վսեմ և ազնիվ հասկանիշները ուղեցույց
դարձնել, ուսուցանել բարին ու լավը, ձևավորել արդարի կերպարը: Այն ավարտ-
վում է վեհ, հզոր և բիրլիական Արարատ լեռան խորհրդանիշով.

Դեմքը նրա թող միշտ փայլի արեգակի պես անարատ
Ու փառքն անխախտ թող միշտ մնա, որպես Սահլան⁸ ու Արարատ:



Մեզ հասած մյուս գործը «Ռոբ ծերությանն» է: Այն երիտասարդության, անցյալի փառքի կարոտախտ է, որն իր լուծումն է ստանում համամարդկային օրինաչափությունների և հակասությունների քննության մեջ:

Շրջասելով հայտնի թևավոր խոսքը՝ պոետ ծնվում են, հոետոր՝ դառնում, մենք կասենք՝ պոետ ծնվում են, փիլիսոփա դառնում: Ռուդաքին Խայամի պես չի փընտրում կյանքի ունայնության, անլուծելի առեղծվածների, տիեզերական գաղտնիքների պատասխանը: Լա միայն հայեցող է, խորհող ճակատագրապաշտ:

Այս աշխարհը շատ է նման մարդու աչքին՝ կլոր է ևս
Ու քանի կա, ճանապարհն իր պտտվելով պիտի գնա,

Այն, ինչ ցավ էր, կսկիծ ու ցավ, փոխվում հանկարծ դեղ է դառնում,
Իսկ ինչ առաջ դեղ էր ցավի, ցավ դարձած է վերադառնում,

Հնանում է ամենայն բան, ինչ որ նոր էր ժամանակին
Եվ նորանում հանկարծակի, ինչ որ առաջ թվում էր հին:

Այգեստաններն առատաբեր անապատի են/վերածվում,
Անապատում այգիների ծաղկած հրաշքն է տարածվում...

Դու ի՞նչ գիտես, ո՞վ լուսերես, ո՞վ մշկաբույրի վարսագեղ
Թե քո գերին ժամանակին ինչ առևակն էր ու շքեղ,

Դու քո քնքուշ խոպուկների թակարդներն ես հիմա լարում,
Բայց նա առաջ գանգուրներով սիրուններ էր գերեվարում...

Այս ամբողջ բանաստեղծությունը կառուցված է հակաթեզերի վրա, բոլոր հատվածներն արտահայտում են դրականը և բացասականը, որը ի ցույց է դնում իրավիճակների և կացության անկայունությունը: Բանաստեղծության գաղափարական միջուկն է՝ «Ամեն ինչ հոսում, ամեն ինչ փոփոխվում է»:

Ժամանակներն ուրիշ են արդ, ու ես ինքս էլ շատ եմ տարբեր,
Ժամն է արդեն գավազանի, գավազանս ու մախաղս բեր:

Սա մեզ հիշեցնում է այն արժանապատիվ հնագանդությունը, որով Սուկրատեսն էր ընդունել իրեն տրված՝ թույլի բաժակը. «Ժամն է այստեղից հեռանալու, ես՝ որպեսզի մեռնեմ, դուք՝ որպեսզի ապրեք... սակայն որն է լավագույնը՝ հայտնի չէ ոչ ոքի...»:

Հերման Լթինեն, որ Ռուդաքիի բանաստեղծական ժառանգության խնդրով զբաղվողներից առաջինն է, նշում է, որ Ռուդաքին ստեղծագործել է նոր ոճով և մշակել իր սեփականը, որը յուրահատուկ է նրա ամեն մի բանաստեղծական ձևի համար՝ դասիդեի, դազալի, ռոբայիի (քառյակ) ևն:

Սակայն Ռուդաքիին պարսկական գրականության մեջ դազալի հիմնադիր կոչելու խնդիրը վիճահարույց է, քանի որ 10-րդ դարում քնարերգության այդ տեսակը դեռ չէր կայացել: Հետագայում այն ձեռք բերեց կաղապարված և խիստ կանոնիկ ձևական օրենքներ, որոնց չէին համապատասխանում Ռուդաքիի քնարական զեղումները: Ենթադրվում է, որ այդ շրջանում դազալ էին կոչում սիրային ապրումներ, հոգեկան տվայտանք, քնության նկարագիր արտահայտող ոչ մեծ չափի բանաստեղծությունները: Այնուհանդերձ, տարբեր տեսաբաններ տարբեր անուններ տալով Ռուդաքիի քնարական զեղումներին՝ դազալ, երգ, էլեգիա ևն, համերաշխ

են այն խնդրում, որ պարսկական դազալի զարգացման փառավոր ճանապարհը մինչև Սաադի և Հաֆեզ սկսվում է Ռուդաքիից:

Եթե դազալը պարսիկների կողմից ընդունված արաբական բանաստեղծական ձև է, ապա քառյակը զուտ իրանական ծագում ունի, որը ընդհակառակը՝ արաբների կողմից յուրացվելուց հետո փոխարինվել է արաբական ոտքայի բառով: Այս հանգամանքը, ի դեպ, նաև այդ երկու ժողովուրդների մշակութային փոխազդեցության փաստերից մեկն է: Ռոդային, որը հնագույն ակունքներ ունի, բանահյուսական ձև էր, Ռուդաքիի պոեզիայում հղկվելով, ձեռք բերեց բարձրաշխարհիկ արվեստին հատուկ տարրեր, դարձավ լուրջ խոհական մտորումների և սիրային զեղումների արտահայտիչ*: Ժողովրդական ստեղծագործության երանգը, որը Ռուդաքիի արվեստի ոգին է, առավել ցայտուն է արտահայտված նրա քառյակներում:

Ընդհանրապես Ռուդաքիի ողջ պոեզիան շնչում է սիրո առաջնության գաղափարով: Նույնիսկ կրոնական մեջբերումները ծառայում են աշխարհիկ սիրո հաստատմանը, սեփական հավատամքի ընդգծմանը: Նրան է պատկանում պարսկական պոեզիայում կրոնը սիրուհուն ստորադասելու գաղափարը:

Ինձ Բաբեից⁹ հեռացրիր, եկեղեցու դուռը տարար,
Ո՛չ, ինձ նման այլ անհավատ դու չես գտնի երկրում արար...
Երկու հազար աղոթք եմ ես իմ սիրածի դռան արել
Բայց սեր իմ, ինձ դարձրիր այլ հավատի աղոթարար:

Մարդկային հոգու խորաթափանց վերլուծությունը, քնարական հերոսի բարդ ու հավասարակշռության պատկերումը, իրական սիրո տվայտանքը, աշխարհիկ ոգու

* Այդ մասին մանրամասն տես՝ *Ա.Կ. Козмоян, Рубаи в классической поэзии на фарси X-XII вв. Ереван, 1981, Ա. Կոզմոյան, Դասական քառյակը Ռուդաքիից մինչև Տամի, «Մարգարտաշար», Երևան, 1991:*

առաջնությունը միջնադարյան գրականության համար ոչ բնորոշ երևույթներ էին: Այդ է պատճառը, որ Ռուդաքիի պոեզիան բազմաթիվ հետազոտողների կողմից բնորոշվել է որպես «վերածննդյան»: Մենք հակված չենք 10-րդ դ. պարսկական պոեզիան արհեստականորեն մղել վերածննդյան գրականությունների հունը, սակայն անառարկելի է այն փաստը, որ Ռուդաքիին բնորոշ են վերջինիս որոշ առանձնահատկություններ: Այո, հանձարները որոշ առումով ժամանակավրեպ են և կանխատեսում ու ազդարարում են ապագան, սակայն նաև՝ մնում են դասային, աստվածապետական կապանքներում, որպես իրենց միջավայրի, իրենց ժամանակի ծնունդ: Գուցե հենց այդ հակասությունն է ծնում այն դրամատիզմը, որով հագեցած են Ռուդաքիի խոհափիլիսոփայական մտորումները: Այդ բանաստեղծություններում քնարական հերոսի և ճակատագրի հակամարտությունը լուծվում է հոգուս վերջինիս:

Չէի արել դեռ ոչ մի քայլ մեր հանդիպման ճանապարհին,
Չէր ըմբռնխնել իմ սիրտը դեռ քո շուրթերի
լույսն ու բարին:

Երբ լսեցի հանկարծակի ես հրաման մի երկևյանի՝
Խմիր գինիդ բաժանումի ու թող անուշ լինի գինին:

Այստեղ աշխարհի ունայնության գաղափարը փոխանցվում է սիրային պատկերների միջոցով: Հանդիպման և բաժանման միջև ընկած ճանապարհը կյանքն է, որն սկսվում է ժխտական-նիհիլիստական երանգով՝ չէի արել, չէի ըմբռնխնել... Կարծում ենք, որ անսքող ճակատագրապաշտությունը, մարդու նկատմամբ բախտանվի անվերապահ հաղթանակը և ընդգծված հոռետեսական տրամադրությունները Ռուդա-

քի պոեզիայում ունեն առավելապես ինքնակենսագրական երանգ, որը միջնադարյան չգիտակցված ռեալիզմի ոգին է:

Ռուդաքիի պոեզիան, որը ժամանակի ընթացքում դարձավ գեղարվեստական խոսքի անմատչելի օրինակ, մեծապես կողմնորոշեց այդ գրականության հետագա զարգացումը: Նրա հետևորդները յուրովի շարունակեցին ազգային պոեզիայի ավանդույթները, լրացնելով, զարգացնելով այն հիմնական գծերը, որոնք բնորոշ էին Ռուդաքիի արվեստին: 12-րդ դարի բանաստեղծ Ռաշիդի Սամարղանդին գրում է.

Եթե որևէ մեկն աշխարհում կատարելության հասնի
բանաստեղծությամբ,
Ապա Ռուդաքին է արժանի գլխավորելու նրան.

Ես հաշվեցի նրա տողերը տասներեք անգամ
հարյուր հազար,
Նույնիսկ ավելին կլինի, եթե հաշվենք
ինչպես հարկն է:
(տողացի թարգմ.)

Մինչև օրս էլ ճշգրիտ վերծանված չեն այս տողերը և տարբեր ենթադրությունների հիմք են տալիս: Արդյո՞ք Ռաշիդին ճշտելու համար տասներեք անգամ հաշվել է նույն հարյուր հազարը, թե Ռուդաքին իրոք գրել է մեկ միլիոն երեք հարյուր հազար տող: Փաստն այն է, որ Ռուդաքիի դասիդեններից, դազալներից, քառյակներից, բանաստեղծական այլ ձևերից ու պոեմներից (Քալիլա և Դիմնա նս) այսօր մեզ է հասել տարբեր ժողովածուներում և բառարաններում սփռված ընդամենը

1047 թեյթ, որոնք ուսումնասիրվել են բազմաթիվ, այդ թվում՝ թաջիկ արևելագետների կողմից: Այդ գործում մեծ է նաև պարսիկ բանասեր Սայիդ Նաֆիսիի վաստակը, որը համեմատելով 78 ձեռագիր- սկզբնաղբյուր, ճշտել է նրան պատկանող գրական ժառանգությունը, որից և մենք կատարել ենք սույն թարգմանությունը*:

* * *

Հայոց պատմության մեջ բազմաթիվ են եղել պարսիկների հետ բարեկամության ու օտարման, հաղթության և պարտության շրջանները: Հայտնի է, որ ամեն մի մերձեցում իր հետ բերել է ազդեցության նոր հոսանք: Դրանով հանդերձ, իրանական աշխարհի արտացոլումը հայ մատենագրության մեջ շատ զուսպ է: Նույնիսկ 18-19-րդ դդ., երբ եվրոպացին ձգտում էր դեպի արևելք, դեպի իրեն օտար քաղաքակրթություն, հայտնաբերում էր նորը, զարմանահրաշք, վերագտնում էր իրեն նոր որակով (Գյոթե-Հաֆեզ, Շուբերտ-Հաֆեզ նս), մենք, հայերս, որ գտնվում էինք այդ երկու մշակութային աշխարհների խաչմերուկում, որի համար օտար չէր ոչ մեկը, ոչ մյուսը, մեր ձեռագրերում միայն հատուկենտ րեկորներ ենք պահպանել պարսկական պոեզիայի նմուշներից: Հասկանալի է, որ իրանական արվեստի ընդգծված աշխարհիկ ոգին խորթ է եղել մեր քրիստոնյա հայրերի գաղափարախո-

* Սայիդ Նաֆիսի, Սիվալ վա Աշար է... Ռուդաքի Սամարղանդի, Թեհրան, 1930-1940 թթ. (պարսկերեն):

սությանը: Այդ իսկ պատճառով, նույնիսկ հոգևոր սոցիալական ինստիտուտի թուլացումից հետո Հայաստանում աշխարհիկ մտքի վերելքի շրջանում, դեռևս շարունակվում էր մշակութային օտարումը՝ պայմանավորված հենց նույն հայրերի կողմից ձևավորված քաղաքական և գեղագիտական գիտակցությամբ, որը ժառանգականության և ավանդույթի ուժ էր ձեռք բերել:

Այսպիսով, միայն 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին պարսկական պոեզիայի թարգմանությունները հայոց մեջ նպատակաուղղված և հետևողական բնույթ ստացան:

Այսօր հայ ընթերցողը ծանոթ է պարսիկ դասականների մի զգալի մասին, իսկ որոշ բանաստեղծներ բազմիցս թարգմանվել և թարգմանվում են, քանի որ թարգմանությունը շարժուն երևույթ է և հնանալու հատկություն ունի: Փոխվում են ժամանակները, փոխվում են հոգևոր արժեքների չափանիշները: Թարգմանիչներն էլ իրենց ժամանակի արդյունքն են և կրում են իրենց դարաշրջանի մտածողության կնիքը: Բազմաթիվ հաջողված թարգմանություններ զարգացման երկար ճանապարհ են անցել, էլ չենք խոսում այն մասին, որ համեմատության մեջ է առավել ցայտուն երևում լավը:

Այսպիսով, ամեն մի սերունդ իրավունք ունի նորից ու նորից անդրադառնալու դասականների թարգմանությանը, քանի որ թարգմանչի վարպետությունից, բանաստեղծական տաղանդից է կախված ոչ միայն սեփական ժողովրդի ճանաչողական սահմանների ընդլայնումը, այլ նաև՝ թարգմանվող հեղինակի հետագա ճակատագիրը:



Բազմաթիվ են օտար բանաստեղծական արվեստի մեկնաբանման և յուրացման ձևերը՝ սկսած ճշգրիտ-տողացի թարգմանություններից մինչև նմանակումներ, փոխադրություններ են: Թարգմանական արվեստի բազմաթիվ դասական նմուշները հիմք են տալիս կարծելու, որ իրապես օժտված բանաստեղծի համար բնագրի լեզվին տիրապետելը ցանկալի է, սակայն պարտադիր չէ (օրինակ, ժուկովսկու հայտնի թարգմանությունները կատարվել են ոչ թե արաբերենից կամ պարսկերենից, այլ Ռյուկերտի գերմաներեն փոխադրություններից, Ա. Բլոկի և Վ. Բրյուսովի թարգմանությունները՝ հայերեն լեզվից կատարած ճշգրիտ տողացիներից են), որ բնագրին գերի մնալը դեռևս արվեստի բարձրարժեք գործ ստեղծելու միակ գրավականը չէ, որ համարժեք թարգմանության օրինական չափանիշին երբեմն չեն ենթարկվում բազմաթիվ գլուխգործոցներ (օրինակ՝ Ֆիցջերալդ-Խայամ), որ թարգմանության հաջողությունը պայմանավորված է իռացիոնալ մի հասկացությամբ, որը «բանաստեղծական տաղանդ» է կոչվում են: Հարկ է կրկին հիշատակել մեր դասականին՝ Կոստանդին Երզնկացուն, որն իր վանական եղբայրների այն հարցին, թե ինչպե՞ս է կարողանում ստեղծագործել, երբ ոչ մի վարդապետի չի աշակերտել, զարմանքով պատասխանում է, «Այլ է աշխատիլն և այլ է շնորհքն ի հոգւոյն»:

Ելնելով թարգմանական արվեստի այս բարդ և հակասական խնդիրներից, ունենալով նաև բանաստեղծների հետ համագործակցած պարսկական դասական քառ-

յակի թարգմանության հաջողված փորձը, մենք փորձել ենք անդրադառնալ պարսկական պոեզիայի հիմնադրի՝ Ռուդաքիի գրական ժառանգությանը:


Ազգային Ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում կատարած մեր աշխատանքը՝ Ռուդաքիի բանաստեղծությունների տողացի թարգմանությունները պարսկերենից, տառադարձությունները և ծանոթագրությունները տրամադրել ենք Վահագն Դավթյանին, որը լավագույնս իրականացրել է դրանց բանաստեղծական թարգմանությունը և հայ ընթերցողին նվիրել ոչ միայն պարսկական հոգևոր արժեքի, այլ նաև հայ թարգմանական արվեստի և հայոց լեզվի մի նոր հուշարձան:

ԱՐՄԱՆՈՇ ԿՈՋՄՈՅԱՆ



ՂԱՄԻԴԵՆԵՐ





ՈՐԲ ԾԵՐՈՒԹՅԱԼ

Ատամներս մեկիկ-մեկիկ արմատահան եղան արագ,
Ի՛նչ ատամներ, ամեն մեկը մի լույս կանթեղ, մի լույս ճրագ,

Մարջան էին ու մարգարիտ, արծաթացու ու սպիտակ,
Լուսադեմի աստղեր էին ու անձրևի շիթեր հստակ:

Բայց մաշվեցին ու թափվեցին, և ցավը խոր սիրտս ծակեց:
Դժբախտությունն այս ահավոր գուցե Սատու՞ռնն ինձ առաքեց¹⁰,


Ոչ, Սատուռնից կախում չունեիր ու ոչ էլ իմ երկար կյանքից,
Ամենայն ինչ այս աշխարհում կախված է լուկ Աստծո կամքից:

Այս աշխարհը շատ է նման մարդու աչքին՝ կլոր է նա,
Ու քանի կա, ճանապարհն իր պտտվելով պիտի գնա:

Այն, ինչ ցավ էր, կսկիծ ու ցավ, փոխվում հանկարծ, դեղ է դառնում,
Իսկ ինչ առաջ դեղ էր ցավի, ցավ դարձած է վերադառնում,

Հնանում է ամենայն բան, ինչ որ նոր էր ժամանակին,
Եվ նորանում հանկարծակի, ինչ որ առաջ թվում էր հին:

Այգեստաններն առատաբեր անապատի են վերածվում,
Անապատում այգիների ծաղկած հրաշքն է տարածվում:



Դու ի՞նչ գիտես, ո՞վ լուսերես, ո՞վ մշկաբույրդ վարսագեղ,
Թե քո գերին ժամանակին ինչ առնական էր ու շքեղ.

Դու քո քնքուշ խոպոպների թակարդներն ես հիմա լարում,
Բայց նա առաջ զանգուրներով սիրուններ էր գերեվարում:

Ժամանակներն անցան, ավաղ, երբ նա կնճիռ չուներ դեմքին
Եվ կուպրի պես սև մազերով հմայում էր աղջիկ ու կին.

Երբ չքնաղ էր ու սիրելի, ցանկալի հյուր էր ամենուր,
Սակայն օրերն այդ երջանիկ ու՞ր սլացան, ասա ինձ, ու՞ր...


Գեղուհիներն ու՞ր գնացին, որ սիրով են նրան նայել,
Ինքն էլ այրող հայացքներով նրանց սրտերն է հմայել.

Այն օրերը, երբ իր սիրտն էլ երջանկությամբ էր ղողանջում
Եվ ամենն այդ կորցնելու վախն էր միայն նրան տանջում:

Նա ամեն մի թյուրք գեղուհու մի զույգ հասուն նռան համար
Շռայլում էր, վատնում անվերջ դիրհեմները իր անհամար:

Եվ նաժիշտներ քանի—քանի լուռ խարխափում անտես մթնում,
Գալիս էին գիշերներով ու բաղձանքով նրան գտնում:

Այո, միայն գիշերներով, քանզի իրենց տիրոջ ահից
Ցերեկները տեսնում նրան, սակայն մոտիկ չէին գալիս:



Եթե ոմանց համար գինին, տեսքն ու կեցվածքն ինքնավայել
Խիստ դժվար է տրվել կյանքում, բախտն ինձ ոչինչ չի խնայել:

Քանզի սիրտս զանձարան է, իմ երգերը՝ մաքուր ոսկի,
Ու սերն ինքն է անմահական զարդարանքն իմ ամեն խոսքի:

Ես ուրախ եմ ապրել կյանքում, վիշտը երբեք ինձ չի նեղել,
Եվ իմ սիրտը զվարթության հրապարակ է միշտ եղել:

Իսկ սրտերն այն, որ այս կյանքում կարծրացել են վիշտ ու ցավից,
Քնքշացել են իմ երգերով, դարձել մետաքս, դարձել թավիշ:


Իմ հայացքով սիրուն կանանց խոպոպներն եմ ես հարդարել
Եվ պերճախոս այրամարդկանց զրույցներին ականջ արել:

Ոչ ընտանիք եմ ունեցել, ոչ սրտամաշ հոգսեր ու կին,
Նման բազում կապանքներից ազատել եմ ես իմ հոգին,

Ով լուսնադեմ, Ռուդաքիին դու հիմա ես լոկ հանդիպել
Եվ ոչ առաջ, երբ ծերության շունչը նրան դեռ չէր դիպել:

Այն ժամանակ շրջում էր նա, ողջ աշխարհը թողած հետև
Եվ իր երգերն էր հորինում սոխակի պես հեշտ ու թեթև:

Երանելի ժամանակներն ու՞ր գնացին, ախ ի՞նչ եղան,
Երբ մեծամեծ էմիրների հետ էի ես նստում սեղան:



Արքաների ձեռքին էին միշտ ռոբայիներն իմ դիվանի,
 Ու ես սիրված պոետն էի չքնադագեղ Խորասանի,

Իմ ճանապարհն ուր էլ գնար, որ հարուստի տունն էլ տաներ,
 Տերը նրա ինձ արծաթով ու նժույգով պատիվ կաներ:


Թե ուրիշին այլոք էին հարստությունն ու փառք տալիս,
 Իմն ուղղակի շահի տնից, շահի ձեռքից էր ինձ գալիս:

Խորասանի էմիրը մեծ ինձ չորս հազար դիրհեմ տվեց,
 Դրա վրա հինգ հազար էլ Մաքան¹¹ էմիրը հավելեց,

Այլ իշխաններ նմանապես ինձ ութ հազար նվիրեցին,
 Ապրում էի լիության մեջ, ինչպես վայել է լուկ մեծին:

Լսեց էմիրն իմ երգերն ու... ինձ լիառատ շնորհ արեց
 Եվ հպատակ իշխաններին նույն բանն անել հրամայեց:

Ժամանակներն ուրիշ են արդ, ու ես ինքս էլ շատ եմ տարբեր,
 Ժամն է արդեն գավազանի, գավազանս ու մախաղս բեր:



ԳԻՆՈՒ ՄԱՅՐԸ

Գինու մորը զոհասեղան պիտի հանել,
 Իսկ զավակին առնանգել ու զնդանել,

Բայց չես կարող առնանգել, թե սկզբից
 Չես տրորել ու ճխլելով հոգին քամել:

Թեպետ գիտեմ, դա արարք չէ օրինական,
 Չի կարելի զոկել մանկանն իր մայրական


Կուրծք ու կաթից, մինչ ութ ամիս չլրանա,
 Ու գարունը ծաղկափթիթ՝ աշուն դառնա:

Եվ աշնանը պիտի կարգով օրինական,
 Մորը զոհել, իսկ մանկանը նետել զնդան:

Եվ մանուկն այդ մթության մեջ, այդ խավարի
 Ութ օր պիտի գարմանք կտրի ու շվարի,

Իսկ երբ հետո գլխին եկածը հասկանա,
 Պիտի ողբա, պիտի եռա ու սաստկանա,

Պիտի վշտից իրեն նետի մեկ վեր, մեկ վար,
 Պիտի ծփա ալիքներով իր հողմավար:



Եթե ոսկին հրի վրա հալել ուզես,
Լա կեռա, բայց ոչ բանտված այդ մանկան պես:

Այդ մանուկը հարբած ուղտի կմանվի,
Կփրփրի, որ սատանան իր մեջ ծնվի...

Բայց պահապանն այդ փրփրուրը կհավաքի,
Եվ մանուկը պայծառացած՝ կճառագի:

Իսկ երբ լրիվ հանգստանա ու սուս անի,
Պահապանը կփակի դուռն այդ զնդանի:


Եվ այդպես լուռ, այդպես հլու, հանգստացած,
Լա կշողա՝ մարջանի ալ գույնն ստացած:

Ալ՝ առավել, քան Եմենի սուտակը ալ,
Առավել, քան Բադախշանի¹² ակները լալ:

Երբ հոտ քաշես, կթվա, թե վարդ է բուրում,
Կթվա, թե մուշկ ու համպար ես համբուրում:

Եվ նա այդպես կարասի մեջ կբոցկլտա,
Մինչև զարունն այս աշխարհին ողջույնն իր տա:

Այդ ժամանակ, երբ զիշերն իսկ դուռը բացես,
Քեզ կթվա, թե արևի տուն է ու ծես:



Իսկ թե բյուրեղ գավում տեսնես, քեզ կթվա,
Թե մարջան է սուրբ Մովսեսի ափի վրա:

ժլատ գծուծն այն ըմպելով դառնում շռայլ,
Վախկոտը՝ քաջ, դեղնած դեմքը դառնում է ալ:

Երբ քո արյան ու սրտի մեջ նա է եռում,
Ընկրկում են վիշտ ու տանջանք, փախչում հեռուն:

Լա թախիծդ մինչև Թանջիր¹³ կհալածի
Ու քո դիմաց ուրախության դուռ կբացի:


Թե ձեռքդ առնես գավը, լեցուն գինով այդ հին,
Կհայտնվես պարտեզներում դրախտային,

Վարդերի մեջ, հասմիկների, ցող ու ծաղկի
Դու կնստես արքայական խրախճանքի:

Կճաշակես մի այնպիսի վայելք ու սեր,
Որ աշխարհում երբևիցե չէիր տեսել:

Շուրջդ գորգեր, կահույքներ են ոսկեզօծված,
Ծաղիկների ու ռեհանի բույրով օծված,

Գեղուհիներ, որոնց ճկուն մատների տակ
Տավիղների թրթռոց է, անուշ նվազ:



Գահի վրա թագավորն է Խորասանի,
Շարքով նստած էմիրներ են քանի—քանի:

Եվ նստած են ազնվագարմ քանի այրեր,
Եվ Բալամին¹⁴, և գյուղատեր Մալեհը ծեր:

Իսկ նրանց դեմ՝ թրջուհիներ նրբահասակ,
Ամեն մեկը կես ամսեկան պայծառ լուսնյակ:

Ամեն մեկի գլխին պսակ է մրտենու,
Եվ այտերին ամեն մեկի գույնն է գինու:


Մատովակը, որ զավակ է թյուրք խաթունի¹⁵,
Կուռք է ասես, հավասարը կյանքում չունի:

Ու երբ զավը նրա ձեռքով պտույտ արեց,
Տիրակալի դեմքին զվարթ մի լույս թառեց:

Այդ հուր գինուց մատովակն էլ անուշ կանի,
Որ միշտ հիշի տիրակալին Սաջեսթանի¹⁶:

Կխմեն շահն ու ծառաներն իր անհամար
Չափար էրն Սոհամադի¹⁷. փառքի համար:

Ամենքի մեջ երևելին ու Իրանի փառքն արդարն
Տիրակալն է այդ խղճամիտ, որ շողում է որպես արև:



Լա կյանքն ինքն է, կյանքի լույսն է ևս փրկարար,
Լման մեծի դեռ չի տեսել աշխարհն արար:

Չի էլ տեսնի, ինչու՞ վատնենք խոսքերն իզուր,
Լա պահապանն է Աստղծու, սովերն է սուրբ:

Բուր մարդիկ սերվել հողից, ջրից, քամուց ու կրակից¹⁸,
Իսկ թագավորն այս Սասանյան սերվել է լոկ արեգակից:

Խավարն ու մութը տերության սրա լույսից լույս ստացավ,
Իսկ երկիրը ավերակված՝ եղեմական այգի դարձավ:


Ու եթե դու պերճաբան ես, սխրանքները մեկ—մեկ գովիր,
Թե դպիր ես, գրիչդ առ ու նրա փառքը ներբողիր:

Իսկ թե ուզում ես ընթանալ իմաստության ճանապարհով,
Բարձր պահիր բանականի օրենքները խստաբարո:

Եթե նրան տեսնես թո՛ղ դեմ, հարկ է, որ դու այսպես դատես՝
Ահավասիկ նոր Պլատոն, հելլենական նոր Սոկրատես:

Թե հակված ես շարիաթին¹⁹, հավատացյալ ես հիրավի,
Լա ընդ համար նոր Հանիֆե, Նոր Սուֆյան է ու նոր Շաֆի²⁰:

Եթե բացի բերանը նա ու բարբառի իմաստնորեն,
Այնպես լսիր, ասես թե դու Լոդմանին²¹ ես լսում նորեն:



Թե խելացի մարդու խելքին գիտելիքներ են գումարվում,
Իմաստունի մտքի մեջ խոր հավատն իբրև լույս է վառվում:

Թե հրեշտակ ուզես տեսնել, նրան նայիր դու անվարան,
Քեզ կթվա նա է քո դեմ՝ սուրբ դրախտի խոնարհ ծառան:

Իսկ թե նայես նրա դեմքին, ապա դեմքն այդ պիտի փաստի,
Թե ասածներն իմ այս բոլոր որքան են ճիշտ ու հավաստի:

Անբասիր է վարքը նրա, նա անբասիր ծագում ունի,
Բարությունն իր պիտի չափվի անչափի հետ ու անհունի:


Եթե նրա գործերի լուրն առնի անգամ չար սատանան,
Նրա բոլոր մտքերը նենգ փոխվեն պիտի, բարի դառնան:

Իսկ թե հանկարծ իր պալատում տեսնես վսեմ այդ արքային՝
Խորհիր հաստատ՝ Սողոմոնն է՝²² կենդանացել, նստել գահին:

Նույնիսկ Սամը քաջակորով, անմահ պապը Ռոսթամ Ջալի²³,
Չիուն նստած չի թվացել այդքան զորեղ ու պանծալի:

Իսկ թե մի օր մարտի դաշտում տեսնես նրան դու ասպազեն,
Աչքերիդ թույլ պիտի թվա անգամ հզոր ու սեզ բազեն:

Անզոր ու թույլ պիտի թվան անգամ փղերն այն արշավող,
Որ հարբելիս խելագարվում, դառնում ցասում, դառնում են ոխ:



Ահ ու դողի է նա մատնում իր ոսոխին ու աշխարհին,
Էսֆենդիարն²⁴ էլ կսարսափի՝ եթե տեսնի զարկի պահին:

Իսկ երբ հանգիստ է նա առնում, ասես Սիյամ²⁵ լեռն է հպարտ,
Որի շարժումընքն այս աշխարհում դեռ չի տեսել և ոչ մի մարդ:

Եվ ոսոխներն այն աժդահա, երբ իր նետն են տեսնում հանկարծ,
Ասես իսկա խարույկի դեմ դառնում ճրագ, դառնում են կայծ:

Թե երկնային Սարսն էլ²⁶ մի օր ձայն տա նրան, կանչի կովի,
Հաստատ գիտեմ նրա դիմաց իբրև գերի պիտի փռվի:

Իսկ երբ նորից խմում է զոհ, գինու գավը ձեռքին պահում,
Գարնան անձրևն այդքան առատ իր բարությունը չի մաղում:

Գարնան ամպից այս աշխարհին ջուր ու ցող է միայն ծորում,
Իսկ նրա ձեռքն առատորեն ոսկի ու ակն է շնորհում:

Երբ նա ձեռքի ավն է բացում ու տարափ է տեղում գանձի,
Շռայլության այդ մեծ ծեսին ջրհեղեղն իսկ կնախանձի:

Շռայլության այդ ծեսերից, այդ անձրևից բարեբաստիկ,
Ներքողի գինը բարձրացավ, ու ոսկու գինն ընկավ սաստիկ:

Ու երբ աղքատ ու ձեռնուկայն բանաստեղծ է պալատ գալիս,
Շռայլաշող գանձեր է նա իր հետ տանում տուն դառնալիս:



Բանաստեղծին ոչ միայն գանձն, իր քնքշանքն էլ չի զլանում,
Իսկ գիտունին, իմաստունին տեղ է տալիս իր դիվանում:

Ժողովրդի հանդեպ այնքան արդար է նա ու բարերար,
Որ այդպիսի մահմեդական դեռ չի տեսել աշխարհն արար:

Թե թույլ մարդուն, թե զորեղին դնում է նա նույն նժարին,
Ջայրույթ չունի ոչ մեկի դեմ, քանզի սրտում շատ է բարին:

Եվ բարությունն այդ անսպառ սփռել է նա ողջ աշխարհում,
Ու չես գտնի դու ոչ մեկին, որ անհաղորդ է այդ բարուն:


Կյանքից հոգնած հուսահատին զորավիզ է նա միշտ դառնում,
Խոցվածները զնում, նրա հարկի տակ են ապաստանում:

Ներողամիտ է նա սաստիկ, երբ նրա մոտ մարդիկ գալիս
Ու մեղքերն են խոստովանում, թողություն է նա միշտ տալիս:

Ցրում է նա զայրույթ ու քեն, ներում է նա մեղքը մարդկանց,
Այդպիսին է թագավորը մեր հաղթական և բյուրազանձ:

Վագր է ահեղ, բայց չի դիպչում իր դեմ լացող հեզ եղևիկին,
Ամբր էրն Լայսը²⁷ կարծես նրա մեջ է ապրում կրկին:

Նրա մեջ է ապրում կրկին անմահ ոգին Ռոսթամ Ջալի,
Իր փառավոր ժամանակով ու գործերով իր պանծալի:



Ո՛վ Ռուդաքի, դու ներբողիք փառքն ու պատիվն այդ վեհ մարդկանց,
Եվ հավատա, որ ներբողիդ պատասխանը սեր է ու գանձ:

Բայց որքան էլ ջանք թափես դու, որքան էլ քո միտքը սրնս,
Հազիվ թե դու երբևիցե նրանց վայել ներբող գրես:

Եթե անգամ երկու հարյուր սուրբ հրեշտակ գա քո կանչին,
Քեզ ենթակա նույնքան փերի և նույնքան մոգ, և նույնքան ջին,

Մեկ է, երբեք չես ասելու նրա գահի խոսքն արժանի,
Թե՛ն այն, ինչ դու արեցիր, ուրիշները, ո՛չ, չեն անի:


Այս ներբողում, որին տվի ես այնքան ուժ, ձիրք ու շնորհ,
Որ ամեն ինչ նրբաճաշակ և ամեն ինչ դաշն է ռև նոր,

Բայց էմիրին արժանի խոսքն անզոր եղա ես բարբառել,
Թե՛ն մի նոր Ջարիր²⁸ եմ ես ու Աստուծոց եմ այս ձիրքն առել:

Փառք էմիրին, որի ցուքից ողջ աշխարհն է փառավորում,
Որի ամեն գործից, խոսքից մաքրություն ու լույս է ծորում:

Եվ սարսում եմ, որ ներբողն այս իմ թուլությունն ի տես հանի,
Թե՛ն գիտեմ, պերճախոս եմ Սարի նման ու Սահրանի²⁹

Եվ շահերին ներբողելիս շատ եմ հմուտ, շատ եմ ճարտար,
Ու գուցե հենց դրա համար կրեմ բախտի պատիժն արդար:



Ամեն մեկի գովերգությունն ինչ—որ սահման ունի իր մեջ,
Սակայն նրան ներքողելիս ես չեմ տեսնում սահման ու վերջ:

Ո՛վ Ռուդաբի, դու, որ կյանքում չէիր զիջել դեռ ոչ ոքի,
Ինչու՞ այստեղ շվարեցիր՝ ամոթահար ու անհոգի,

Մի՞թե հենց ինքն Օմարը³⁰ քեզ խիզախություն չներշնչեց,
Եվ հարգաբժան Աղնանը³¹ քեզ շշուրհեց պատիվն այդ մեծ:

Եթե կյանքում չլինեի այսքան թույլ ու անհամարձակ
Ես նրա մոտ կսուրայի սուրհանդակի նման արագ,


Եվ այս պոեմն ատամներով կտանեի... բայց Ռուդաբին,
Ծեր է, ավաղ, ու ներքողն իր հանձնում է նա սուրհանդակին:

Թող նա տանի ու իր տեղակ մեծ էմիրից ներում հայցի,
Որ Ռուդաբին անկարող է անձամբ գնալ նրան այցի,

Հետև էլ մաղթի, որ աշխարհում բարձր մնա գահն էմիրի,
Իսկ նրա նենգ ոսոխներին անգորության ցավը տիրի:


Թող զլուխը բարձր պահի, քանզի իր բախտն ու ապագան
Չուկն է պահում, այս աշխարհն իր մեջքին առած այն ձուկ—հսկան³²:

Դեմքը նրա թող միշտ փայլի արեգակի պես անարատ
Ու փառքն անխախտ թող միշտ մնա, որպես Սահլան³³ ու Արարատ:



ՂԱԶԱԼՆԵՐ





ԳԱՐՈՒՆ

Նորից եկավ ուրախ գարունն իր գույներով հրաշագեղ,
Բուրեց անուշ ու հրճվանքով հազավ նորից զուզսն իր շքեղ,

Ով կքել էր ծերության տակ, պատանությանը հայարտացավ,
Եվ աշխարհն այս հին ու ծեր՝ շահելության հանդես դարձավ:

Երկինքն իսկույն ոտքի հանեց ամպե գնդերն իր անհամար,
Եվ գորապետ դարձավ քամին, իսկ որոտը՝ շեփորահար,


Ջահակիրը կայծակն է շեկ՝ ցուլանքներով իր փառահեղ...
Բյուր մարտեր եմ տեսել կյանքում, բայց այս մեկը շատ է ահեղ:

Նայիր ահա այն սն ամպին, կին է ասես որբ ու այրի,
Ականջ արա այս որոտին, ողբ է, սուգ է սիրահարի,

Տես, արեգակն իր դեմքն է լույս մերթ—մերթ հանում ամպի տակից,
Ջորական է ասես գերյալ, որ փախչում է իր պահակից:

Հիվանդ էին առժամանակ, տկար էին երկինք ու հող,
Բայց ողջացան, երբ շնչեցին հասմիկի բույրն ապաքինող:

Տեղաց նորից անձրևն առատ, տեղատարափ մի մշկաբույր,
Եվ ձյան տակից, ելան ի լույս հողի գույներն հազար ու բյուր:



Դաշտ ու հովիտ կանաչ հազան, հազան ծաղիկ ու ծիածան,
Առուները սառցակալած կարկաչեցին արծաթաձայն:

Ամպրոպն ահեղ իր որոտով երկնի կապույտ դուռն է բացում,
Կայծակները ամպերի մեջ հրե ճյուղեր են տարածում:


Կակաչներն են կանչում հեռվից, իրենց այրվող ալը հանած,
Ասես դրանք գեղեցկուհու մատներն են նուրբ ու հիևայած,

Վարդի թփին թառած տխակն իր մեծ սիրո գովքն է անում,
Եվ արտույտն է հեռու հեռվից նրա երգին պատասխանում:

Տատրակները սոճուն թառած, մեղեդիներ են գեղգեղում,
Եվ աշխարհի վրա համայն օրհնությունն է ասես տեղում:

Դե, ուրեմն, գինի բերեք, փառաբանենք բաբերարին,
Քանզի նրա վերին կամքով յարը նորից գտավ յարին:

Բեր, մատուցվակ, գինի խմենք, հարբած երգենք խրախճանքում՝
Քանի դեռ երգ կա արտույտի, ու տխակն է երգում այգում:



Հեռու—հեռվից Մուլյան³⁴ գետի բույրն է գալիս,
Սիրած յարիս հիշողության հուրն է գալիս:


Ամու գետի ավազների ալիքը տաք
Մետաքսի պես՝ իմ ոտքերին դուր է գալիս:

Ջեյհունը³⁵ հորդ մեր սպիտակ նժույգների
Կեսից վար է, հոխորտալով զուր է գալիս:

Ով Բուխարա, ուրախ, եղիր, ապրիր ուրախ,
Էմիրն ինքը ելել ու քեզ հյուր է գալիս:

Նոճի է նա, իսկ Բուխարան չքնաղ այգի,
Նոճին ելել չքնաղ այգու դուռն է գալիս:

Թե Բուխարան երկինք է մով, լուսին է նա,
Ականջ արեք, լուսնի ծագման լուրն է գալիս:



Հոնգուր—հոնգուր ողորմ եմ ես հեռացումս իմ սիրածի,
Այդպես սոխակն է հեկեկում վարդի վրա լուսաբացի:

Այսուհետև թե բախտն ինձ հետ վարվի այդպես անգութ ու չար,
Ես իմ սրտի բոցով կայրեմ ճակատագիրն իմ անարդար:

Երբ շիկնանքը, իմ սիրելիս, քո այտերն է հանկարծ այրում,
Շուրջդ ինձ պես հազար—հազար փարվանա է թնահարում,


Բայց դու նրանց թներն այրում կրակներով քո դմնդակ,
Վար ես բերում անշնչացած ու թողում ես սև հողի տակ:

Եվ սակայն ես գերեզմանում չեմ պարտկվի, թե դու չգաս
Ու չնստես իմ շիրիմին, գեթ մի անգամ չհեկեկաս:

Կյանքն այդպիսին է, սիրելիս, այդպիսին է աշխարհն արար
Ու այդպիսին էլ կմնա պտույտի մեջ իր անարդար:

Մի պտույտով կարող է նա մեկին կարգել արքա ու տեր
Տալ թագ ու գահ և շնորհել շահնշահի ոսկե գինդեր,

Այլ պտույտով հենց նրանից մի քիչ արյուն թողնել տեղում,
Այն արյան պես, որ ոտնակոխ ողկույզն է իր սրտից հեղում:



Ողբի նման հեկեկացող ձայն լսեցի լուսաբացին...
Ո՛վ բարեկամ, ականջ դրի քո տավիղի անուշ լացին,


Եվ մրմունջն այդ զարմանալի, հեծեծանքն այդ կախարդական,
Իմ ականջին առավելս հաճելի էր աղոթքը քան...

Եվ ինձ թվաց՝ հեռու դաշտից այդպես անուշ, այդպես տրտում
Լուսաբացին նետահարված ինչ—որ եղնիկ է մղկտում:

Թեև գիտեմ տավիղը քո չունի իր մեջ ոչ մի չար նետ,
Բայց իմ սրտի ու հոգու մեջ նետ է խրում նա մերթ ընդ մերթ:

Լաց է լինում նա գիշերով, հեծեծում է լուսաբացին,
Լեզու չունի, բայց սիրածից լուր է տանում նա սիրածին

Լա մնրթ խենթ ու խելագարին դարձնում է լուրջ ու խորագետ
Ու մերթ լուրջ ու խորագետին դարձնում է կապվելու խենթ...



Ուրախ ապրիր վայելքներով ըս սիրածի,
Այս կյանքն ի՞նչ է հեքիաթից ու քամուց բացի:

Գալիք օրվա ուրախությանն աչքդ հառիր,
Պետք չէ հիշել երբևիցե ցավն անցածի:


Ես չեմ հիշում, երբ ինձ հետ է չքնաղ փերին,
Որ նման է անուշաբույր լուսաբացի:

Երջանիկ է, ով շատ տվել՝ շատ է առել,
Դժբախտ է, ով թաքցրել է ծովն իր գանձի:

Այս կյանքն, ավաղ, ամպ է, հողմ է լուկ անցողիկ,
Դու զինի բեր, ուրախ երգը թող թևածի:

Ո՞վ է արդյոք այս աշխարհից շնորհ առել,
Որ ըս դիմաց բախտը հիմա դուռն իր բացի:

Ո՞ր խելացին արդարություն տեսավ կյանքում,
Որ դու տեսնես ճանապարհիդ, ո՞վ խելացի:



Սեղեղի, գինի և գեղեցկուհի՝ որպես լուսնկան,
Երբ նրան տեսան, հրեշտակները ջրհորը ընկան³⁶,

Ես ինչպե՞ս նայեմ սիրածիս դեմքին, ախ, մահից հետո
Շիրիմիս պիտի խոտի փոխարեն նարգիզներ դուրս գան³⁷:


Այն մարդը, որին սիրո պարզեան հաճույքն է գերում,
Չի գսպում իրեն, սիրո ճամփին է անվերջ դեգերում,

Եւ ցերեկները չի տեսնում քնավ գերանն իր աչքի,
Իսկ գիշերները ծղոտ է փնտրում այլոց աչքերում:

Ո՞վ սեզ նոճի, մեր բաժանումն հողմի նման
Ինձ տապալեց, իմ կյանքն արեց արմատահան...

Կապված եմ քեզ, ախ, ի՞նչ ասեմ ինձ՝ անհույսիս,
Վարսիդ խոպոպն օղապարան դարձավ վզիս:

Մեկն ու մեկին հարց չի տալիս խոնարհ գերիդ,
Թե ի՞նչ արժե արդյոք համբույրն ալ շուրթերիդ:



Մուշկ ու համպար և հասմիկի թուփը ծաղկյալ,
Խնձորենին ու մրտենին ու վարդը ալ.

Քո շուքի դեմ, ո՛վ արքաներ գերող դու կուռք,
Անկարող էր չթառամել, չդալկանալ:

Սրբանում է գիշերը, երբ քողիդ տակից
Դեմքդ է բացվում և սկսում պայծառ շողալ:

Եվ արևն է ասես իսկույն վարագուրվում,
Երբ նետում ես քողդ ու բացում այտերդ լալ:

Եվ խնձորի կնձանվեր դնչիկը քո,
Թե խնձորի մաշկն ունենար սևուկ մի խալ:




Հրաշք խմիչք է գինին, փառք տանք նրա ստեղծողին,
Եւ է իսկույն տարբերակում լավին, վատին, նենգ թնոողին.

Հոգով ճորտին տարբերակում ազնվագարմ վեհաշուքից
Ի հայտ բերում մարդու հոգում թաքնվածն ու գաղտագողին:

Երբ էլ խմես, հարմար պահ է, բայց հաճելի ես առավել,
Պահերը, երբ վարդն ու հասմիկն իրենց բույրն են խառնում հովին:

Գինին բազում անզուսպ ու խենթ նծույզներ է սանձել կյանքում,
Ուժ է տվել ու զորություն բարձր բերդեր նվաճողին:

Իսկ երբ ժլատ մարդն է հանկարծ գինի խմում ու թունդ հարբում,
Առատաձեռն է նա դառնում, ասես փոխվում ամբողջովին:



Բեր այն գինին, որ գինի չէ՝ հոսող սուտակ,
Շողքը նրա սրի շողք է արնի տակ,

Վարդաջրի նման մաքուր ու պարզ է նա,
Իսկ խմելիս, երանելի երազ է նա:

Գինու գավը ամպ է ասես, գինին՝ սուրբ ցող,
Որ դառնում է քո մեջ աղոթք մի վերացող:


Թե մարմնի մեջ Աստված հոգի, սիրտ չդներ,
Ապա գինին պիտի դրանց փոխարիներ:

Երանի թե, գինին արծվի ճանկում լիներ,
Որ անարժան վատահոգին այն չխմեր:

Մեր էմիրի հրամանով թող աշխարհն այս ապրի ցնծուն,
Իսկ էմիրի բախտի վրա չիջնի երբեք սև ամպ ու ձյուն,


Նրա հանդեպ վերին կամքով թող միշտ գործի առածն այս հին՝
Թե մի դուռ է փակում Աստված, հետն էլ հազար դուռ Լ բացում:

Էհ, ի՞նչ ասեմ, ի սկզբանե աշխարհի կարգն այդպես է միշտ,
Մարդու կյանքը մերթ բերկրանք է, մերթ էլ անհուն թախիծ ու վիշտ:



ԽՈՒՆԿԱՆ-ՓԻԼԻՍՈ ՓԱՅՍԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂ ՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





Այս աշխարհը ամբողջովին քուն է միայն, երազ ու քուն,
Դա գիտե մարդն այն խելացի, որ սթափ է ապրում կյանքում,

Չարն ու բարին այս աշխարհի նույն բնում են տեղավորված,
Իսկ վայրկյաններն ուրախության բնակվում են տառապանքում:

Ո՛վ արդար մարդ, ո՛վ ազնիվ մարդ, ի՞նչ ես նստել այս աշխարհում,
Երբ նա ամբողջ իր բան ու գործն անարդար է այսպես վարում,

Լավ խրատներ է նա տալիս, բայց գործելիս ստոր է խիստ,
Գնդեցիկ է նա արտաքուստ, բայց ներսում չարն է վարարում:

Ո՛վ սիրտ, ինչքան պիտի փնտրես դու ինքդ քեզ,
Ինչքան պիտի պաղ երկաթին անվերջ զարկես,

Կորեկաչափ իմ սրտի մեջ՝ սերս մի լեռ,
Եվ այդ լեռը խեղճ կորեկին ճնշում է դեռ.

Թե ուզում եք տեսնել մարմին մի անհոգի,
Ռուդաքիին նայեք միայն, ոչ այլ ոքի:



ԲԱՆԱՍՏԵՂՑ ՄՈՐԱԴԻԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Մեռավ Մորադին³⁸... Մահ չէր միայն դա,
Մեծերի մահը այլ է, հավատա:

Նա հոգին տվեց Հորն՝ արարողին,
Իսկ իր մարմինը տվեց Մայր հոգին:

Դու զուր ես ասում, թե նա մահացավ,
Ոչ, հրեշտակ էր, երկինք վերացավ:


Շյուղ չէր, կամ ծղոտ, որ քամին տանի,
Ջուր չէր, որ ցուրտը սառցով պատանի,

Վարսերում ջարդվող նա սանր հո չէր,
Ոչ էլ չոր հատիկ, որ հողում կորչեր:

Ունայն պատյանում փակված գանձ էր մեծ,
Բնակիչն էր նա երկու աշխարհի,

Իր մարմինն ունայն նա հոգին տվեց,
Երկինք առաքեց հոգին իր բարի:

Եվ այդ սուրբ հոգին, որ մարդ չտեսավ,
Փայլակին տալով Աստղծուն հասավ,




Գինի էր ասես, կփի մեջ լցվեց,
Ու իր նստվածքից ազատագրվեց:

Հռոմն ու քուրդը, մերվցին ու ռեյցին
Մեկտեղ են բռնում այս կյանքի ճամփան,

Բայց ամեն մեկը հետո՝ առանձին
Վերադառնում է տունն իր սեփական:

Մի՞թե ատլասը կհամեմատեն
Ու չեն տարբերի կոպիտ քաթանից...

Բայց լռի՛ր, քանզի հրեշտակն արդեն
Քեզ անգթորեն զրկել է ձայնից:



ԲԱՆԱՍՏԵՂՈ ՇԱՀԻԴ ԲԱԼՆԻԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Եվ առաջ զևաջ Շահիդ Բալնիի³⁹ քարավանը ձիգ...
Համարիր, սակայն, որ այդ ոչ թե ինքն, այլ մենք զևացինք:


Պարզ հաշվով կյանքից զուրգ աչք պակասեց ու մեն մի մարմին,
Բայց իմաստության հազար վառ ճրագ հանգցրեց քամին:

Ժառանգիր նրա տառապած հոգու պաշարները լի,
Մինչև մոտենա քեզ եղունգ քաշող մահը տանջալի:

Ինչ տրվել է քեզ, ինչ ձեռք ես բերել դու ջանքով անբուն,
Հեշտ մի շառլի որ անփութորեն մի վատնիր կյանքում:

Հաճախ բարեկամն օտար է դառնում հանուն իր շահի,
Ճշմարտությունն այս թող հոգիդ իր մեջ միշտ զգաստ պահի:

Հիշիր, ե՞րբ է, որ հասնում է զայլին զանգատը զառան,
Ե՞րբ է թռչնակի սարսափը տեսնում բազեն անվարան:



Մեռան մեծերն այս աշխարհի, ասուպների պես մարեցին,
Գլուխները իրենց հպարտ մահվան առաջ խոնարհեցին,


Անցան նրանք ու հավիտյան այն հողի տակ անհետացան,
Որի վրա ապարանքներ ու հրաշքներ արարեցին:

Եվ իրենց հետ բյուր գանձերից նրանք ոչինչ, ոչինչ չառան,
Իրենց անբավ ունեցվածքից լուկ մի ճերմակ պատանք տարան,

Այս աշխարհից այդ պատանքը մնաց միայն նրանց հագին
Եվ մեկ էլ այն, ինչ որ այլոց տվին շառլ ու անվարան:

Ես մազերս սև եմ ներկում ոչ թե ջահել երևալու⁴⁰,
Ոչ թե նորից սիրուններին գիրկս առած, համբույր տալու,

Այնպես, ինչպես բոլոր մարդիկ սև են հագնում սուգ անելիս,
Իմ զլուխը սև եմ ներկել հեզ ծերության վիշտը լալու:




Օ, ո՛չ, զին չունի քո շրթունքների շաքարը բարի,
Իսկ խոպոպներիդ պատճառով ընկավ զինը համպարի,

Բայց թեթևամիտ գլուխդ, ավա՛ղ, ու՛մ է հարկավոր,
Տգետ ես, սիրուն, իզուր մի դիմիր խոսքի ու բառի:

Կյանքն ու աշխարհն ինձ ամենուր խրատներ են տալիս բազում,
Խորհուրդներ են տալիս ազնիվ ու այսպես են ինձ միշտ ասում.

«Մի նախանձիր դու այն մարդուն, որ հասել է բարօրության,
Քանզի շատ են և այն մարդիկ, որ քո վիճակն են երազում»:

Եվ ասում են. «Մի զայրանա, հաճախ լեզուդ պահիր դու փակ,
Ով իր լեզվին կապ չի դնում, ոտքերին են դնում կապանք»:



Մարգարեներն ինձ կանխատեսության շնորհը տվին,
Ինչու՞ ջուր փևտրեմ, թեքվելով հունաց չոր առուներին⁴¹:

Ինչու՞ իմ մարմնի գոհության համար սուրբ հոգիս տանջեմ,
Օ, ոչ, իմացեք, որ ես շների առաջնորդը չեմ:

Չայնս սոխակի ձայն էր, ու երգին սիրահարվեցի,
Գեղեցիկ էի Հովսեփի նման՝ զնդան տարվեցի⁴²:

Շատ մեծերի հետ ու իշխանների նստեցի հացի,
Տեսա ականհայտն, իսկ թաքնվածը՝ հոգով զգացի:

Մի բան խնդրեցի, որ ինձ արժանին շնորհեն միայն,
Եվ սակայն, ավա՛ղ, մնացի կյանքում այսպես ձեռնուռայն:



Մինևույն է, կյանքը մարդու՝ կարճ, թե երկար,
Վերջը նրա մի հողաթուժք է ու մի քար.

Մինևույն է, պարանն ինչքան ձգվել ջանա,
Մի տեղ պիտի հանգույց ընկնի ու վերջանա:

Մեկ է, ապրել ես վշտի մեջ ու տանջանքի,
Թե ցնծացել սեղանի մոտ խրախճանքի.

Թե աշխարհից ինչ—որ չնչին բան ես առել,
Կամ թե Ռեյից մինչև Թարազն ես⁴³ ավարել.

Ողջը սուտ է, սատանայի նյութած խաբկանք,
Իսկ երազը երազ է լուկ և ոչ թե կյանք:

Այդ բոլորը մեկ է դառնում մահվան ժամին,
Եվ սուրում է ունայնության դաժան քամին...



Այս մարդկանց հետ շատ շփվելուց քեզ ի՞նչ օգուտ,
Երբ լեն—մենակ պիտի մնաս գերեզմանում:


Հողի տակ է քո յարն արդեն, ուր ցուրտ է, մութ,
Ուր զեռուներն իրենց սովոր գործն են անում:

Նա, ով կյանքում չէր խնայում ոսկի ու զանձ,
Որ նրա ծամն ու խոպուկները զարդարի,

Եթե նրան այդ վիճակում տեսնի հանկարծ
Ու թե կույր չէ, պիտի սարսի, պիտի սառի...

Հեռու—հեռու ճամփաներից եկավ հեծյալ մի առնական,
Եկավ քեզ մոտ ծառայելու, եկավ հոժար, խոնարհ այնքան,

Տաս տարի է անցել արդեն, ն՝ դուր կգա՞ իմ խոջային,
Եթե նա տուն վերադառնա այսպես ծեր ու անօգնական:




Շատ անգամ եմ ես այս տան մեջ եղել հարթած ու երջանիկ
եվ փառավոր եմ ես եղել, քան էմիրներն ու քան արքան,

Նույն եմ ինքս, նույն քաղաքն է, նույն են ամեն տուն ու տանիք,
Բայց չգիտեմ, ինչի՞ համար սրտիս սուգը սև է այնքան:

Կուշտը քաղցածին միշտ էլ հիմար է կյանքում համարել,
Անգոսնել նրան ու նրա վիշտն է միշտ արհամարհել,

Թե մաշագործի ձեռքերում տեսնես աղվեսի մորթի,
Իմացիր, վաղուց մեկն աղվեսի դեմ թակարդ էր լարել:




Բախտը մարդուն շատ է մատնում իր դավերին,
Ինքդ ջանա, որ դեղ անես քո ցավերին,

Դու տուր և առ, քանզի երբեք չի գղջում նա,
Ով առել է, բայց տվել է շատ ավելին:

Ջավակներիդ այս ինչպե՞ս ես նայում, աշխարհ,
Սերթ մայր ես դու ու մերթ չար ես, որպես խորթ մայր,

Ջարմանում եմ, քեզ ոչ սյուներ են հարկավոր,
Ոչ պատ ու դուռ, ոչ հենման կետ՝ հիմքիդ համար:




Լավ իմացիր, դու այս կյանքում հյուր ես միայն աննպատակ,
Չարժն բնավ, որ աշխարհին կապես ամուր սիրտը քո տաք.

Եթե անգամ ընում ես դու մետաքսի մեջ ու դիպակի,
Միևնույն է, վաղը պիտի անհետ կորչես սն հողի տակ:

Գարնան ծաղիկ ես, ցողը բիրբրում,
Թունդ գինի ունես, ինչու՞ չես բերում,

Ես այգուղ դիմաց կանգնած եմ մենակ,
Ծարավ եմ սաստիկ, էլ չեմ համբերում:




Երբ գեղուհին քնքուշ ձեռքով գինու գավաթ է մեզ բերում,
Խմում ենք մենք, հարբում ենք մենք, ու մեր արյունն է խենթ եռում,

Անգետ մարդիկ Նայում են մեզ ու անվանում են խելագար,
Ախ, ինչ ասեմ, երբ հարբածին խելագարից չեն տարբերում:

Եթե այս գինուց միայն մի կաթիլ Նեղոսը ծորի,
Կոկորդիլոսը հարբած կմնա մի հարյուր տարի,


Եթե եղևիկն էլ դրանից ըմպի թեկուզ մի կաթիլ,
Առյուծ կդառնա ու վագրի երախ պիտի պատահի:



ԲԵՅՐԵՐ

ՌՌԲԱՅԱՐ





Կյանքը քամի, ամպ է, ափսոս, դու մոտիկ բեր գավ ու գինի,
Այնուհետև թող աշխարհում ինչ ուզում է, այն էլ լինի:




Ինձ մեկից տուր, միանգամից համբույրները քո ամոքիչ,
Իմ սրտով չէ, որ պարտքը քո հատուցում ես այդպես քիչ—քիչ:



Երբ համբուրում ես սիրածիդ, աղի ջուր ես խմում ասես,
Եվ որքան շատ խմես, հոգիս, այնքան սաստիկ կծարավես:




Կակաչ էի, թերթերիս մեջ կրակ ու կայծ,
Ավաղ, հիմա ասես խնձոր եմ ցամաքած:



Քո սերն իմ մեջ ոչ համբերանք թողեց, ոչ սիրտ,
 Իսկ գեղուհիդ ինձ ոչ համբույր զոհեց, ոչ սիրտ,
 Այն վիշտը, որ սերն է տալիս, վիշտ չէ, այլ լեռ,
 Այն սիրտը, որ քոնն է, սիրտ չէ, այլ ժայռ է բիրտ:



Իմ մարմինը, հոգուս նման, սիրո վշտից խիստ հազեցավ,
 Արևաշաղախ արտասուքս թարթիչներիս մարջան դարձավ,
 Բաժանումի տառապանքից խանդի կրակն ահազնացավ,
 Հաստատ գիտեմ, դժոխքում է լոկ վիճակվում այսպիսի ցավ:




Չէի արել դեռ ոչ մի քայլ մեր հանդիպման ճանապարհին,
 Չէր ըմբռնեսել իմ սիրտը դեռ քո շուրթերի լույսն ու բարին,
 Երբ լսեցի հանկարծակի ես հրաման մի երկնային.
 — Խմիր գինիդ բաժանումի, ու թող անուշ լինի գինին:




Այցի դիմաց սիրտս ուզեց, էժան տվի, ձրի տվի,
 Պաշի դիմաց հոգիս ուզեց, հոգիս ասես սրի տվի,
 Իմ լուսնկան սակարկելիս վաճառական է շատ հմուտ,
 Ողջը տվի, ձրի տվի, սրի տվի, հրի տվի:






Վշտի տան մեջ հավետ փակված տոկացողը մենք ենք, որ կանք,
Այրվող սրտից անվերջ հորդող արցունք—ցողը մենք ենք, որ կանք,
Տանջանքի մեջ մի փուշ բախտ երագողը մենք ենք, որ կանք,
Եվ այս դաժան, այս անողոր բախտի գոհը մենք ենք, որ կանք:



Սիրտ, սա այգի չէ, պտուղ մի փնտրիր, գտնել չես կարող,
Ուռենուտ է սա, որ չի ծանրանում բերքով ու բարով,
Երկու դուռ ունի, իսկ այգեպանը հսկում է վերից,
Սիրտ իմ, հող դարձիր ու քամու նման անցիր աշխարհով...




Բախտի տվածով, սիրտ իմ, գոհացիր ու ապրիր ազատ,
Մերժիր կապ ու լուծ, հոգով զորացիր ու ապրիր ազատ,
Մի նայիր երբեք, թե ո՞վ կա կյանքում քեզանից վերև,
Քեզանից ցածի հոգում խորացիր ու ապրիր ազատ:



Ինձ Զաբեից¹⁴ հեռացրիր, եկեղեցու դուռը տարար,
Ոչ, ինձ նման այլ անհավատ դու չես գտնի երկրում արար,
Երկու հազար աղոթք եմ ես իմ սիրածի դռանն արել,
Սակայն, սեր իմ, ինձ դարձրիր այլ հավատի աղոթարար:






Հենց դեմս դրի սիրատենչ նամակն իմ սեր—լուսնյակի,
Արտասուքներիս աստղաբույլն օձեց շորերն իմ հագի,
Երբ գրիչ առա, որ պատասխանեմ, չիմացա, ավաղ,
Թե սիրտս ինչպե՞ս դնեմ արանքում իմ այդ նամակի:



Երբ իմ կարիքը չեն զգում մարդիկ, մոտս չես գալիս,
Չեն խոսում, ես էլ իմ տենդի հետ եմ առնում ու տալիս,
Երբ միևնչև անգամ հոգիս ելնում է, բերանս հասնում,
Ջուր տվող չկա, իմ հոգևած քիթեր, լոկ դու՞ք եք լալիս...




Քեզ բախտն սպանեց ու չամաչեց իր անգթությունից,
Սիրտը չփափկեց ու չմաքրվեց չարության թուլսից,
Ու զարմանում եմ, որ հոգեռան չամաչեց անգամ
Քո այդ երկնային, քո աստվածային գեղեցկությունից...



Երբ մահանամ ես քո սիրուց, եկ, սիրելիս, եկ ինձ այցի,
Եկ, տես մարմինս իմ տանջահար ու հասկացիր՝ որքան լացի,
Մնարիս մոտ նստիր մի պահ ու շուրթերով քո քնքշաթերթ
Ասա միայն. «Ավաղ, ես քեզ սպանեցի, բայց զղջացի»...






Գեղեցկության ծով ես, հողիս, մարջանով է շուրթի շիկենի,
 Ատամներդ ծովից հանած մարգարիտի սուրբ հատիկներ,
 Հոնքդ նավ է, իսկ ճակատիդ այդ լուսեղեն խորշումն՝ ալիք,
 Պարանոցդ՝ ջրապտույտ, և աչքերդ՝ փոթորիկներ...



Չէ, չի հագենում, դաժանությունն իր չունի վերջ ու ծայր,
 Երբ նայում է ինձ, չեն արցունքոտվում աչքերը պայծառ,
 Եւ, իմ միակը, որին իմ կյանքից ավել եմ սիրում,
 Հավատացեք ինձ, հազար թշնամուց առավել է չար...




Սիրո ճանապարհն արյունով լեցուն մի անդունդ ունի,
 Եվ խորությունը հասնում է հազար—հազար կանգունի,
 Լեյլու նմաններն ի՞նչ գիտեն, ավաղ, մեր վերք ու վշտից,
 Մեջնունը գիտն փիճակը խենթի ու ցավն անքունի...



Երբ անունդ են տալիս մի տեղ, իմ սրտի մեջ լույս է վառվում,
 Բախտս իսկույն քո անունի շող ու շուքով է զարդարվում,
 Բայց երբ հանկարծ խոսք են խոսում ու չեն անում զովքդ, հողիս,
 Վիշտն է իջնում սրտիս վրա, ու մշուշն է մտքիս փարվում:






Դու կարմիր վարդից գույն ես գողացել, բույր ես փախցրել,
Գույնը՝ այտերիդ, բույրը՝ քո առատ վարսերին ցրել,
Երբ լվացվում ես, քո վարդագույնից շիկնում է առուն,
Երբ ծամդ ես քանդում, մուշկն է սկսում բուրմունքն իր փռել...



Վարսերդ սահել քո գլխաշորի ծոպերի տակից
Եվ շոյում են մեղմ դեմքդ, որ ալ է անգամ սուտակից,
Քո ամեն մազից ասես վիրավոր մի սիրտ է կախված,
Ու մի հոգի է կախված խոպոպիդ ամեն օղակից:




Սիրտ, գործերդ նրա ծամով ամուր կապված հանգույց դարձան,
Մարմնիս բույր երակներում իմ տենչանքներն ընդարձացան,
Միակ հույսս արցունքն էր իմ, որ նա տեսներ ու ինձ գթար,
Բայց այդ զիշեր իմ կոկորդում, այն, արցունքներս էլ քարացան:



Տանջված եմ խիստ... Խոպոպների միշտ թակարդ են իմ դեմ լարել,
Հնդկական կուռքն իր նետի դեմ արևոտ սիրտս է թիրախ արել,
Ով քարոզիչ, խորհուրդներից ինձ չտվին ոչ մի օգուտ,
Ու ես հիմա տուն եմ ավեր, որին հողմերն են ավերել...





Այն կզվարար, վրիժառու գեղեցկուհուն որոնելով,
 Չափչփեցինք աշխարհն արար, անցանք անթիվ ցամաք ու ծով,
 Աշխարհով մեկ թափառելուց շատ հոգնեցին ոտքերը մեր,
 Իսկ ձեռքերը տառապեցին ու մեր գլխին տվին լացով:



Անջատման վշտից այրվում եմ, լալիս, փախավ իմ քուռը,
 Բայց վիշտն այդ, զարմանք, դարձավ իմ միակ ուրախությունը,
 Ու միտք եմ անում, թե այսպիսին է անջատումը մեր,
 Հապա ինչպիսին կլինի ժամն այն, երբ գաս իմ տունը...



Թե դու չերևաս, թող արեգակն էլ հուրն իր չվառի,
 Թե ինձ չշողաս, թող լուսնկան էլ վերում խավարի,
 Թե գաս, այդ պահին թող ոչ ոք կյանքում չլինի դժբախտ,
 Բո չեկած օրը՝ օր չէ, սիրելիս, բաժինն է մահի:




Իմ թարթիչներին արտասուքն ասես շար է գոհարի,
 Արտիս գաղտնիքը շիկնեց վարդի պես, որ դեմքս այրի,
 Իմ այդ գաղտնիքը, որ պահում էի բոլորից թաքուն,
 Լաց ու կոճ դարձավ ու ականջն ընկավ արար աշխարհի:



Քամու ճամփին եմ, ասես, իմ սիրո կանթեղը վառել,
 Քանի որ հոգիս քո շողուն շուքից կարող է մարել,
 Սիրտս այրվում է, ծուխը բռնել է աշխարհը արար,
 Կեցցե՛ն ռունգերդ, որ մինչև հիմա հոտը չեն առել...





Թե կրքիդ նժույզն հենց ինքդ ես վարում, այրամարդ ես դու,
 Թե կույր ու խուլին չես արհամարհում, այրամարդ ես դու,
 էլ ինչ այրամարդ, եթե թշնամուն հարված չի տալիս,
 Թե թույլ ու խեղճին ձեռք ես երկարում, այրամարդ ես դու:



Թե վարսդ փռես, օրվա լույսն անգամ կարող է հանգել,
 Իսկ եթե հյուսես, դարձնես պիտի բազեի ճանկեր,
 Թե խոպոպներդ դարսեղարս անես, կթվա մարդկանց,
 Թե ալիք—ալիք Թարազի մուշկն է այդպես հորձանքել:



Քո անունը բացվող օրվա դրոշի պես է փողփողում⁴⁵,
 Ձեռքիդ գավը նորած լուսնի արծաթով է, ասես, շողում,
 Բախտս նման, շատ է նման փոփոխական քո մտքերին,
 Իսկ իմ հացը՝ այն նվերին, որ աղքատին ես շնորհում:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Ղասիդեն** մեծածավալ, միահանգ բանաստեղծական ձև է, հիմնականում ներբողի բովանդակությամբ: Ճիշտ է, այն արաբական ծագում ունի (արաբ. դասո՛ղ՝ նպատակաուղղված), սակայն պարսկական պոեզիայի ավանդույթներին հարմարվելով՝ այնպես է յուրացվել նրանց կողմից, որ չի դիտվել որպես օտարածին: Այն կանոնիկ ձև է, որն ունի պատահիր օրենքներ: Բաղկացած է երեք մասից: Առաջին մասում (նասիք) բանաստեղծը ազատ է իր ընտրության մեջ և հազուրդ է տալիս իր քնարական գեղումներին, որոնք հիմնականում սիրո, բնության, գինու և սեփական ապրումների նկարագրություններ են, երկրորդ՝ հիմնական մասը, նվիրված է պատվիրատուի գովերգմանը (մադհ), իսկ երրորդում բանաստեղծը ներբողում է իրեն (ֆախր), իր արվեստը, օրհնում է մեկենասին ևն:
2. **Ղազալը** հայոց մեջ հատկի է որպես գազել, որը ուուներենից փոխանցված բառի աղավաղումն է: Այն միահանգ քնարական բանաստեղծություն է, սիրային բովանդակությամբ, հանգավորվում է aa ba ca ea ևն ձևով: Վերջին բեյթում (մաքթա) բանաստեղծը հիշատակում է իր անունը (թախալլուս): Ղազալը Ռուդաբիի պոեզիայում որպես ժանրային ձև դեռևս կանոնիկ չէ, այդ է պատճառը, որ նշված բեյթում նրա անունը բացակայում է:
3. **Մուլյան**. տես ծանոթագրություն 34:
4. **Ջեյհուն**. տես ծանոթագրություն 35:
5. **Չանգը** լարային գործիք է:
6. **Ջաֆար էբն Սոհամադ**. տես ծանոթագրություն 17:
7. **Բադախշան**. տես ծանոթագրություն 12:
8. **Սահլան**. տես ծանոթագրություն 33:

9. **Քաբե. տես ծանոթագրություն 44:**
10. **«Դժբախտությունն այս ահավոր գուցե Սատուռնն ինձ առաքեց»**
Սատուռնը, ըստ մահմեդական աստղագուշակության, դժբախտության և ծերության խորհրդանիշ է:
11. **«Դրա վրա հինգ հազար էլ Մաքան էմիրը հավելեց»**
Մաքանը Սամանյան հարստության էմիր էր, որը ապստամբեց Նասրի դեմ և սպանվեց: Այդ հաղթանակին մեծապես օգնեց Ջաֆար էբն Մոհամադը: Վերջինիս փառաբանելու նպատակով էմիր Նասրը Ռուդաքիին պատվիրեց գրել հայտնի «Գինու մայրը» ներբողը:
12. **«Առավել, քան Բաղախշանի ակները լալ»**
Բաղախշանը լեռնային շրջան է Աֆղանստանի և Թաջիկստանի տարածքում: Այն հայտնի է հրաշալի սուտակով:
13. **«Նա թախիծդ մինչև Թանջիր կհալածի»**
Թանջիրը քաղաք է Ջիբրալթար նեղուցի մոտ, որով արաբները մտան Իսպանիա՝ 711 թ.: Սերձավոր և միջինարևելյան գրականության մեջ՝ հեռավոր վայրի խորհրդանիշ, նման մեր Չինմաչինին:
14. **«Եվ Բալամին և գյուղատեր Սալեհը ծեր»**
Աբուֆազլ Աբու Ալի Բալամիները տոհմիկ ազնվականներ էին Սամանյան արքունիքում: Վերջինս վեզիր էր, գիտնական, հայտնի է որպես արաբերենից կատարած «Թաբարիի պատմության» թարգմանիչ:
15. **«Մատուվակը, որ զավակ է թյուրք խաթունի»**
Գերված գեղեցիկ թրքուհիները, ինչպես նաև թյուրք պատանիները ծառայում էին արքունիքում և հայտնի ավատատիրական տներում: Հատկապես նրանց էր հանձնված խրախճանքի ժամանակ օշարակ և գինի մատուցելու պարտականությունը: Երբեմն տիրակալները այնպես էին կապվում իրենց ստրուկի հետ, որ վերջիններիս

- անսահմանափակ իրավունքներ էին տալիս: Հայտնի է սուլթան Մահմուդի և Այազի սիրո պատմությունը, որը մուտք է գործել նաև գրականության:
16. **«Որ, միշտ հիշի տիրակալին Սաջեսթանի»**
Սաջեսթանը (Սիսթան, Սեիսթան) երկրամաս է Իրանի և Աֆղանստանի տարածքում, որը 10-րդ դ. Սամանյանների իշխանության տակ էր գտնվում:
17. **«Ջաֆար էբն Մոհամադի փառքի համար»**
Ջաֆար էբն Մոհամադի օգնությամբ էմիր Նասրը հաղթեց իր դեմ ապստամբած հրամանատար Մաքանի զորքերին:
18. **«Բոլոր մարդիկ սերվել հողից, ջրից, քամուց ու կրակից»**
Այստեղ Ռուդաքին բանաստեղծական պատկերի է վերածել միջնադարյան փիլիսոփայության քննության առարկա 4 տարրերը՝ հողը, ջուրը, կրակը և քամին, որոնք, ըստ նրանց տեսության, հանդիսանում են նյութական աշխարհի հիմքը:
19. **«Թե հակված ես շարիաթին, հավատացյալ ես հիրավի»**
Շարիաթը (արաբերեն՝ շաուրա՝ ճշմարիտ ուղի) ավելի լայն հասկացություն է, քան «մահմեդական իրավունք»՝ ավանդական բնորոշումը, որովհետև, ինչպես նկատում է շարիաթի գիտականներից մեկը, այն ուղեկցում է մարդու կյանքը և գործունեությունը «օրորոցից մինչև գերեզման»:
20. **«Նա քեզ համար նոր Հանիֆե, նոր Սուֆյան է ու նոր Շաֆի»**
Աբու Հանիֆեն, Սուֆյանը և Ալ-Շաֆիին հայտնի արաբ աստվածաբաններ են, որոնցից ամեն մեկը իր ուսմունքն է ստեղծել այդ բնագավառում: Հանիֆեի ուսմունքի հետևորդները կոչվում են հանիֆեականներ, Ալ-Շաֆիի ուսմունքի կրողները՝ շաֆիականներ: Նրանց գաղափարների տարածմանը նպաստում էր այլահավատների նկատմամբ հանդուրժողականությունը:
21. **«Այնպես լսիր, ասես թե դու Լոդմանին ես լսում նորեն»**
Լոդմանը դիցաբանական իմաստուն է:

22. **«Մտորհիր հաստատ՝ Սողոմոնն է կենդանացել, նստել գահին»**
Սողոմոնը Աստվածաշնչյան կերպար է, հրեաների թագավորը, իմաստուն այր, Ղորանում կոչվում է Սուլեյման, որին ենթարկվում են ողջ կենդանական աշխարհը՝ նույնիսկ ոգիները:
23. **«Նույնիսկ Սամը քաջակորով, անմահ պապը Ռոսթամ Ջալի»**
Ռոսթամ Ջալը պարսկական էպոսի՝ Ֆիրդուսու «Շահնամեի» հերոսն է, ուժի, հզորության, հաղթանակի խորհրդանիշ:
24. **«Էսֆենդիարն էլ կսարսափի, եթե տեսնի զարկի պահին»**
Էսֆենդիարը Ֆիրդուսու «Շահնամե» էպոսի հերոսներից է, քաջ մարտիկ, որը Աքիլեյի նման անխոցելի էր և Բրոնզամարմին անունն էր կրում: Խոցելի էին միայն աչքերը, որոնք թիրախ դարձան Ռոսթամ Ջալի երկսայր նետին:
25. **«Երբ հանգիստ է նա առնում, ասես Սիյամ լեռն է հպարտ»**
Սիյամը (Սամ) ավանդական սար է, որը պատսպարում էր արաբների դեմ ապստամբած Մուսաննայի զորքերին: Ասում են, իբրև թե, նա կախարդանքով լուսինը հանում էր ջրհորից և լուսավորում էր հեռուները: Սիյամ սարը լուսի և հզորության խորհրդանիշ է: Այն գտնվում է Սամարղանդի մոտ:
26. **«Թե երկնային Մարսն էլ մի օր ձայն տա նրան, կանչի կովի»**
Մարսը պատերազմի և ռազմի խորհրդանիշ է:
27. **«Ամըր էբն Լայսը կարծես նրա մեջ է ապրում կրկին»**
Ամըր էբն Լայսը հայտնի նվաճող էր Սաֆարյանների հարստությունից:
28. **«Թե մի նոր Ջարիր եմ ես ու Աստծուց եմ այս ձիրքն առել»**
Ջարիրը 7-րդ դարի արաբ բանաստեղծ է:

29. **«Թե գիտեմ պերճախոս եմ Սարի նման ու Սահբանի»**
Սարը և Սահբանը արաբ հանրահայտ հոետորներ են:
30. **«Մի՞թե հենց ինքն Օմարը քեզ խիզախություն չներշնչեց»**
Օմարը մահմեդական համայնքի չորս «արդարակյաց» խալիֆներից (Աբու Բաքր, Օմար, Օսման, Ալի) մեկն էր՝ իսլամի մեծ գործիչ, այդ գաղափարախոսության տարածողը և հաստատողը:
31. **«Եվ հարգարժան Աղնանը քեզ շնորհեց պատիվն այդ մեծ»**
Աղնանը Սամանյան հարստության տոհմիկ ազնվական էր, հարգարժան և գիտուն մի այր:
32. **«Ձուկն պահում, այս աշխարհն իր մեջքին առած այն ձուկ-հսկան»**
Ըստ մերձավորարևելյան միջնադարյան պատկերացումների, երկրագունդը գտնվում էր ցլի վրա, իսկ ցուլը՝ ձկան: Պատկերի իմաստն է՝ «երկնքից գետին»:
33. **«Ու փառքն անխախտ թող միշտ մնա, որպես Սահլան ու Արարատ»**
Սահլանը լեռ է Արաբական թերակղզում:
34. **«Հեռու- հեռվից Մուլյան գետի բույրն է գալիս»**
Մուլյանը Բուխարայի մոտով հոսող գետակ է, որի ափին տարածված են եղել խընձորի հրաշալի այգիներ և ծառաստաններ:
35. **«Ջեյհունը հորդ մեր սպիտակ նժույգների»**
Ջեյհունը Ամու Դարյա գետի արաբերեն անվանումն է:
36. **«Երբ նրան տեսան հրեշտակները ջրհորը ընկան»**
Ըստ Ղուրանի, հրեշտակներ Հարութը և Մարութը սիրահարվել են գեղեցկուհի Արուսյակին (Ջոհրա-Կեներա) և նրան հայտնել Աստծո գաղտնի անունը: Արուսյակը այդ գաղտնիքի միջոցով համբարձվել է երկինք, անմահություն է ձեռք բերել և դարձել մուլորակ: Նա ղեկավարում է մուլորակների մի խումբ, հրաշալի ձայն ունի և կոչ-

վում է «Երկնային երածիշտ»: Ինչ վերաբերում է Հարութին և Մարութին, ապա, նրանք պատմվել են աստծու կողմից և նետվել ջրհորը, ուր պիտի մնան մինչև դասաստանի վերջին օրը:

37. «Շիրիմիս պիտի խոտի փոխարեն նարզիզներ դուրս գան»

Նարզիզը պարսկական պոեզիայում այքերի խորհրդանիշ է: Այս պատկերի իմաստն է. «Նույնիսկ մահիցս հետո, իմ հողից խոտի փոխարեն նարզիզներ (այքեր) դուրս կգան. քեզ նայելու, քեզանով հմայվելու համար»:

38. «Մեռավ Մորադին, մահ չէր միայն դա»

Մորադին Ռուդաքիին ժամանակակից բանաստեղծ էր, որից ընդամենը մի քանի բեյթ է մեզ հասել:

39. «Եվ առաջ գնաց Շահիդ Բալխիի քարավանը ձիոց»

Շահիդ Բալխին բանաստեղծ էր, Ռուդաքիի ժամանակակիցն ու սիրելի բարեկամը: Պարսկական պոեզիայում Բալխին համարվում էր հոռետեսական տրամադրությունների հիմնադիր: Նրան են պատկանում՝

*Եթե վիշտը կրակի պես ծուխ ունենար,
Աշխարհը ողջ մթության մեջ պիտի մնար...*

հայտնի սողերը: Գրել է նաև արաբերեն լեզվով:

40. «Ես մազերս սն եմ ներկում ոչ թե ջահել երևալու»

Ռուդաքիի այս բանաստեղծությունը արաբական պոեզիայի փայլուն իմացության ապացույցներից մեկն է: Դա «պատասխան» է հանրահայտ արաբ բանաստեղծ էրև Ալ-Ռումիի «Սիրուկների համար չեմ ես ներկում մազերս սև» ստեղծագործության: Ի դեպ, Ռուդաքիին նմանակել է նրան ժամանակակից բանաստեղծ Խոսրովանին:

*Չարմանում եմ այն մարդկանց վրա,
Որոնք հիկայում են իրենց մորուքը,
Հինայով նրանք չեն ազատվում մահից
(Միայն) իրենք իրենց են տանջում:*

(սողացի թարգմ.)

41. «Ինչու ջուր փնտրեմ թեքվելով հունաց չոր առուներին»

Սա ակնարկ է հունական փիլիսոփայությանը, գուցե նաև՝ ըմբոստություն է օտար արվեստի դեմ:

42. «Գեղեցիկ էի Հովսեփի նման, գնդան տարվեցի»

Հովսեփը Աստվածաշնչի (Մեսոց 36-41) և Ղուրանի (12-րդ սուրահ) կերպարներից է, պարսկական պոեզիայում՝ գեղեցկության և անմեղության խորհրդանիշ: Ըստ Ղուրանի, Հովսեփ Գեղեցկի եղբայրները, նախանձից դրդված, նրան ջրհոր են նետում, հորը՝ Հակոբին (Յազուբ) հավատացնում, որ Հովսեփին գայլերն են կերել: Ծամփորդները ջրհորից հանում են Հովսեփին և վաճառում մի հարուստի, որը նրան տանում է Եգիպտոս, որտեղ վերջինիս կինը ամբաստանում է Հովսեփին, մեղադրում իր դեմ ոտնձգության մեջ և բանտ նետում:

43. «Կամ թե Ռեյից մինչև Թարազն ես ավարել»

Ռեյը պարսկական հնագույն քաղաք է, այսօր՝ Թեհրանի շրջաններից մեկը: Թարազը քաղաք է այսօրվա Ղազախստանի տարածքում (Ջամբուլ), միջնադարյան պարսկական պոեզիայում՝ գեղեցիկ կանանց հայրենիք: Տողի իմաստն է՝ «աշխարհի մի ծայրից՝ մյուսը...»:

44. «Ինձ Զաբեից հեռացրիր, եկեղեցու դուռը տարայր»

Զաբեն մահմեդական սրբավայր է Սեքքայում, ուր ըստ ավանդության ընկել է երկնային սրբազան «սն քարը», որի վրա կառուցվել է մզկիթ:

45. «Ըն աևուներ բացվող օրվա դրոշի պես է փողփողում»

Սա պարսկական պոեզիայում քաղաք-ներքողի առաջին նմուշներից մեկն է: Այն նվիրված է ջահին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանձարեղ պարգույան վարպետը	7
Ղասիղեններ	27
Ղազալներ	41
Խոհական-փիլիսոփայական բանաստեղծություններ	55
Բեյթեր, ռորայաթ	71
Ծանոթագրություններ	87

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆԴ
«ԱՊՈԼՈՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԴԱԹԻ

Խմբագիր՝ Լ.Ջ. ԱՆԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Հ.Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տպաքանակ՝ 2500: Պատվեր՝
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ կառավարության «Պարբերական» հրատ. տպ.,
Երևան, Արշակունյաց պող. 2:

8(55)

h2.

درد کی

